



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17223

1874-75 u 1875-76

4. Анкер.

1876

369

u-23

2010

2001

ԳԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՆԻՔԻՔԻՔ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՅԻՐԱՐԿԱՐԱՆ

ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

ԿԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏՈՒԹԵԱՆ

ՔՐԻՍՏՈՍԿԱՆ ԺՈՂՈՎԱՆՑ

1874 - 75 ԵՒ 1875 - 76 ԱՄՍՑ

ԱՌ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԱՆՑ



1876

ԿԱՍՏԱՆԿՆԻՊՈԼԻՍ

ՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Ս. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

369
Ա-23

369
Ա-23

ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Ա.ԶԳԱՅԻՆ

ԿՅՈՐՈՆԱԿԱՆ ԳԱՐՁՈՒԹԵԱՆ

ՔԱՂՎԱՆԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1874-75 և 1875-76 ՍՄԱՑ

Ա

ԱԶԳԱՏԻՆ ԺՈՂՈՎՈՅ




ԿՈՍՏԱՆՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. ՄԻԿԱԵԼԵԱՆ

ՈՒՍՏՆԱՆ ԳՐԱՐԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԿՆՏԱՆ



ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Ա.ԶԳԱՅԻՆ

ԿՅՈՐՈՆԱԿԱՆ ԳԱՐՁՈՒԹԵԱՆ

ՔԱՂՎԱՆԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1874-75 և 1875-76 ՍՄԱՑ

Ա

ԱԶԳԱՏԻՆ ԺՈՂՈՎՈՅ



ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Ա.ԶԳԱՅԻՆ

ԿՅՈՐՈՆԱԿԱՆ ԳԱՐՁՈՒԹԵԱՆ

ՔԱՂՎԱՆԱՆ ԺՈՂՈՎՈՅ

25258-տ. 7.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

- | | |
|-----------------------------|-----------|
| 1. Բարսեղյան Մանուկ Գարս | Հրամարեայ |
| 2. Քաջատեղյան Մանուկ Պէլ | |
| 3. Տարսեղյան Արարիկ | Հրամարեայ |
| 4. Բրգունյան Մանուկ Իֆլևոսի | Հրամարեայ |
| 5. Մանուկյան Միքայէլ | » |
| 6. Քաջատեղյան Գարսեղ | » |
| 7. Մանուկյան Մանուկ | Հրամարեայ |
| 8. Խանտուկյան Գարսեղ | Հրամարեայ |
| 9. Բարսեղյան Մարգիս | » |
| 10. Կարսառուկյան Մանուկ | » |
| 11. Իկիտապետյան Մանուկ | » |
| 12. Խանտուկյան Մանուկ | » |
| 13. Միքայէլյան Մանուկ | » |
| 14. Խանտուկյան Պողոս | Հրամարեայ |

ՀՐԱՄԱՐԵԱՆՈՑ ՏԵՂ ԸՆՏՐՈՒՄ ԾՆԵՐԸ

- | | |
|--------------------------------|-----------|
| 1. Կարսառուկյան Գարսեղ Իֆլևոսի | Քաջակայ |
| 2. Քաջատեղյան Կարսառուկ | » |
| 3. Խանտուկյան Խաչիկ | » |
| 4. Բրգունյան Մարգիս | » |
| 5. Խանտուկյան Միքայէլ | » |
| 6. Հարսեղյան Բրգունյան | Հրամարեայ |



4400-56

ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԿԵՂԵՔԱԿԱՆ ԳԱՐՁՈՒԹԵԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ

1874 — 75 ՍՄԻ

և Ռ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՆ

Ա.

Կարգադրիչ

Քաղաքական Ժողովն Ազգային Ժողովոյը շուկոյն ու փոստաւթեանը պատուեալ իւր փառապատիւ Բ. Գանէն ընդունելէ ետեւ, Ազգային Ժողովոյը Կարգադրիչ և Կրօնական ժողովոյ Ասեմբլեայի Կրօնական Կրօնական Կրօնական Կրօնական իւր առաջին նիստն որտեղ 27 նոյեմբերի 1873:

Այս առաջին նիստին մէջ ետեւ իւր դիւանը կազմելով և ապա Կրօնական ժողովոյ հետ միացած խառն Ժողովով Պատրիարքական Տեղապահ ընտրեց, որ 73—74 ի խառն ժողովոյ համարաւթեան մէջ արդէն տեղեկագրուած է:

Քաղաքական Ժողովն Ազգային անդորրութիւնն սկսելով Ժամանակի մը մէջ Վարչութեան տաճանիկի և կիսմարտիկի ծանրացած բեռը իւր վրայ առած էր:

Երայ այս փոփոխութիւնը նորընտիւր Վարչութիւնն ազգին խաղաղութիւնը վերահաստատելու և ազգային գործոց յառաջողութեան ու բարեբան աստիճանի կուսակցութիւններն

ի մի ձուլելու համար պարտը համարեց խիստ անկողմնակալ և գործունեայ ընթացք մը բռնել, և իւր այս ընթացքին նախադիմը ծանոցը հասարակութեան հետզհետէ յետագայ երկու յայտարարութիւնները հրատարակելով:

Պատճէն յայտարարութեանց Քաղ. Ժողովոյ

Ա.

Ազգային Վարչութեան Քաղ. Ժողովն Ի պաշտօնավարութիւն կոչուած միջոցին նախ իւր շնորհակալութեան պարտաւորութիւնը կը մատուցանէ Ազգ. Ընդհ. Ժողովոյ, որ իւր փոստաւթեան բուկովը պատուեց ժողովոյ անդամները և անոնց յանձնեց Ազգ. գործադիր իշխանութեան գեղը. ուստի նորա փոստաւթեան արժանաւոր կերպով պատասխանելու և Ազգային Վարչականութեան արամագրութեանը համաձայն փարսելու համար իւր ջանքն ու անձնուիրութիւնը յօցնելու ամեն կերպով տրամադիր և պատրաստ ըլլալը յայտնելէ ետեւ, կը յայտարարէ նաև հանրութեան ազգիս թէ Ժողովն անկողմնակալութիւնն ու արդարաւիրու-

թիւնն իրեն առաջնորդ ընտրած է, կուսակցութիւններ իւր աչաց առջև հաւատար արժէք ունին, և ազգին խաղաղութիւնը վրդովող որ և իցէ անձ թէ պայծառական ըլլայ և թէ անպաշտօն, իւր ատենին մէջ արժանի դատաստարութիւնը պիտի կրէ. Ազգային մանկական դատարարութիւնը զլիսուորաբար իւր ուշադրութիւնը պիտի քրտէ և իւր ամեն գործոցը մէջ պիտի ճգնի արդարութեան մագլա չափ չը շեղելու:

Ժողովս փտաս է ազգիս ընդհանրութեան կողմանէ համակրանոց և ձեռնառութեան հանգիսի, որոց ազատիներէ կսկսի իւր պաշտօնը և որովհետև ինքիներն անսխալ չգրաւանիր, յօժարակամ նկատողութեան պիտի տանու ազգային մաւրց կողմանէ ըլլալիք անկողմնակալ դիտողութիւնները: Աստի սոյն արամաղութեանը ընդհանուրի վերաբերեալ իւր արարքին վրայ եղած դիտողութեանց կամ բնութեանց ազատութեանը չը դիմադրելէն զատ, ժողովս կը ցանկայ որ անոնք տեղի ունենան ամեն անգամ երբ արարքն ստոյգ ու վաւերական է և կը կարօտի քննադատութեան կամ դիտողութեան սակայն չկրնար հաճիլ որ ատոնք անկեզմութեան սահմանէն ելնելով թշնամական կամ անարգական ձև առնուին: Ինչպէս սոյն նոյնպէս կը խնդրէ Մեծ. Խմբագիրներէն որ անստոյգ աղբիւրներէ բազում արարքներու հրատարակութեանը ազգային խաղաղութիւնը վրդովել, զգուշանան, բանցի ժողովս ազգային լրագրաց միջոցաւ հրատարակութեան պիտի տայ կարեոր խնդրոց համար բնելիր անորհնութիւնները:

Ազգին սոյժմեան վիճակը լոկ սիրոյ և իսպառարարութեան դարմանի պէտք ունի, և ստով պիտի ապահովուի ազգին Վարչական գործոց բարեկարգութիւնը, ուստի ժողովս ամեն կարգի ազգայնոց յորգոր կը կարգայ խաղաղարութեան զգացմամբ իրենց պարտաւորութիւնը ձանշալ և կատարել, եթէ կուզեն փոխադարձաբար ազգէն աննցած իրաւունքին վայելել:

Ժողովս ընդհանուրի վերաբերեալ ազգային նորանոր կարգադրութեանց հետամուտ ըլլալով,

զատեք ալ իրենց Ժամանակին և կարգին հրատարակութեանը պիտի խնայեն Ազգին:

30 նոյեմբեր 1873

Բ.

Ազգային Քաղ. Ժողովս նկատելով որ 30 նոյեմբեր 1873 թուականու հրատարակած Պաշտօնական յայտարարութեանը բրած հրակրին հակառակ ազգային լրագիրներէն ստոնք կը շարունակեն տակաւին Ազգ. Երեսփոխանական Ժողովոյ, Վարչութեան և ազգային Երեսփոխանոց և պաշտօնակց տնանց դէմ թշնամական և անարգական կերպով խօսել:

Նկատելով որ փոխանակ ժողովուրդը սիրոյ և խաղաղութեան յորգորելու յոգիչ հրատարակութիւններով Ազգին խաղաղութիւնը կը վրդովեն:

Պարտք կը համարի ծանուցանել ներկայ ազգարարութեանը Մեծ. Խմբագրաց, որ սոյն սուհետե միևնոյն ընթացքը շարունակող լրագիրն Ազգ. Վարչութեան դէմ իւր վրայ ծանր պատասխանատուութիւն տուած պիտի ըլլայ: Հետևաբար Վարչութիւնն ալ պիտի սրբապատարի անոր դէմ պէտք եղած միջոցներուն դիմել:

Իսկ անոնք որ ազգային սրաշտծնատարայ անձին դէմ ամբաստանութիւն տնին և դատատան կը խնդրեն, կը հրաւիրուին իրենց ամբաստանագիրը ներկայացնել Վարչութեան և օրինական արջամանները լրացնելով դատատանի մանէլ յատկապէս կարգիւղ դատական Մանածպղովին սոյն:

17 յուլիս 1874:

Վարչութիւնս իւր անկողմնակարգութիւնը և հատարակաց խաղաղութեանէն և միայն անոնց լրագիրը մտածելէն զատ ուրիշ կէտ նոյատակի չունենալն արդեամբ ցուցնելու համար իւր ատեանին մէջ եղած որոշումներէն անոնք որ անպատշաճութիւն չունեն յայտնաւելու Պաշտօնական հրատարակութիւն անստով երբեմն պակն ազգային լրագիրներու մէջ հրատարակել որոշեց:

Ազգային ծանուցեալ յոգմանց սրաշտծնաւար Կեդրոնական Վարչութիւնը թափուր մտացած միջոցին շատ մը ազգային հանրական և անհատական խնդիրներ դիզուած էին Պատրիարքարանի դիւանատան մէջ. թէ սոյն խնդիրները շատով վերջացնելու և թէ ամենօրեայ խնդիրները նախնական բնութենէ մը անցնելով մանրամասն և հասուն դիտակցութեամբ որոշելու և վճռելու համար Քաղ. Ժողովս իւր մէջէն Մանածպղով մը սահմանեց, որ ղրդեալ խնդիրներուն որոշումը փութացնելով նոր սրաշտծ խնդիրներուն լուծմանն ու որոշմանըն ալ մեծ դիւրութիւն կուտար, զանոնք ստիտի կերպիւ տեղեկագրելով Ժողովոյ:

Ասկէց զատ իւր գործողութիւններն ստեղծի կանոնաւոր և ճիշդ կատարելու համար Ժողովս Ներքին կանոն մը, և Պատրիարքարանը բարեկարգ վիճակի մը վերածելու համար ալ բարեկարգութեան կանոնադրութիւն մը շինելու նպատակաւ իւր մէջէն յանձնաժողովներ կողմեց, որք մինչև որս շինուած թէ ներքին և թէ բարեկարգութեան կանոնադրութիւններն սոյն անցնելով ժամանակին համեմատ սրիչ նորեր խմբագրելին, և ժողովս դիտողութեանց համաձայն սրագրուելով վաւերացան: Սակայն Պատրիարքարանի համար չինուած Ներքին կարգադրութիւնը պիտի չեն նկատմամբ Ազգ. Ժողովոյ որոշումը յապաղելուն պատճառաւ, չկրցաւ ակողմնապէս գործադրուիլ: ուստի սրա գործադրութիւնը յաջորդ Վարչութեան թողուած է:

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1. Քաղաքական ժողովը շարաթը անգամ մը որոշեալ որ նիստ ընելու պարտաւոր է:
2. Ի պահանջել հարկին արտաքոց կարգի նիստ կրնայ բնել Ս. Նախագահին կամ Ղրդեանին հրաւիրագրով, ուր նուե նշանակեալ Բազու է նոյն նիստին պատճառը:

3. Ժողովակոնք ամեն սովորական և արտաքոց կարգի նիստերուն պարտաւոր են ներկայ գտնուիլ, որոշեալ ժամէն մինչև ստեանը զայտելու տունն, և եթէ մէկը բանաւոր սրաշտծաւ լրացակոց ըլլայ, պարտական է կանխաւ գրութեամբ ծանուցանել ժողովոյն:

4. Եթէ Ժողովական մը երեք անգամ իրարու վրայ ժողովոյ նիստերուն տանց բանաւոր սրաշտծուի և տանց գրուար ծանուցան լրացակոց զտնուի, ժողովոյ Ասենապետք պարտաւոր պիտի ըլլայ Մահմանադրութեան 39դ յօդուածը գործադրել:

5. Ժողովականը ներկայութեան տու մարին մէջ կատարադրեն իրենց ներկայութիւնը:

6. Ժողովականոց մեծազոյն մասին ներկայութեամբ ելած նիստը միայն օրինաւոր կը համարուի, և խնդրոց որոշում կը արուի յոյսանի կամ զտղմնի բուհարիութեամբ և ձայնից ստաւելութեամբ: Բայց մեծազոյն մաս չըլլալով ալ դիւանին ներկայութեամբը տոտեան կը բացուի, և միայն խնդրոց վրայ իրրե նախապատրաստութիւն վիճարանութիւն կրլլայ որոշումը յաջորդ նստին վերապահուելով:

7. Որոշման մը մէջ բուհները հաւատար եկած տանն նախադասին կողմը կը հակի, իսկ ի բացակայութեան Նախագահին Ատենապետին կողմը:

8. Բացակոց ժողովակոնք ժողովոյն մեծամասնութեան բրած որոշումները ընդունելու պարտաւոր են: Միայն եթէ բացակոց ժողովակոնքներէն մէկը պատգովիւն մ'ունենայ, գրաւոր կերպիւ պիտի ներկայացնէ, որ կարծանագրուի տանց վիճարանութեան:

9. Սահմանադրութեան 8դ յօդուածին համեմատ Քաղ. Ժողովոյ վերաբերեալ ամեն գործ, խնդիր և գրութիւնը Նախագահն անմիջապէս տանց յաղաղման թուականը նշանակելով կը յանձնէ Պիւանապետին առաջին նիստին մէջ վիճարանուելու: և նոյն ալ զոյն սրա ձանագրելով և թուականաւ պատահման կարգաւ նշանագրելով խնդրոց կարգը կանցնէ: Խնդրոց մը Պիւանապետին չը յանձնելէն յառաջ եկած յապաղմանը պատասխանատու է Ս. Նախագահը, ինչպէս նաև Պիւանապետն:

ալ պատասխանատու է իրեն յանձնառնելն եւ զբ պատահած յարգողներ քայց սոյն պատասխանատուութիւնը բնականաբար անհետ կը լայ երբ յարգման վրայ բանասոր և ընդունելի պատճառներ տրուին :

10. Քաղաքական ժողովոյ դիւանը խրնդրոց կարգը քննելով կատարէ և բառ սլան կը ներկայացնէ ժողովոյն : Ստիպողական խնդրոց առաջնութիւնը դիւանին կը վերաբերի : քայց ժողովականը նախադասութեան մասին առաջարկութիւն ընելու իրաւունք ունին , և սովորաբար առաջ նախընթաց նաեւն առեւտրութիւնը կը կարգայալ և ապա Խորհուրդներին եկած տեղեկագրերը :

11. Ստիպողական գործոց մը համար Ս. Նախագահը պարտուորեալ է Սահմանադրութեան 87 յօդուածին համեմատ փորձել :

12. Բար առաջին յօդուածի Սահմանադրութեան Ս. Նախագահը գործադիր իշխանութեան փորձն ըլլալով պարտաւոր է անկէ նստի մէջ նախընթաց նիստերուն որոշած գործոց գործադրեալները գրաւոր և համապատասխան կերպով Վիւանին յանձնել և չր գործադրուածներուն ալ պատճառներն յայտնել :

13. Ստեւանագետին պարտքն է Ս. Ստեան բանալ և դոյել 79 յօդուածին համեմատ :

Բ. Ժողովոյն բարեկարգութեանը հսկել :

Գ. Կարգու իսար տալ ժողովականաց :

Կ. Սահմանորոց խնդիրներուն մէջ ժողովոյ ներկայացող անձները հարցաքննել և անոնց պատասխանել բառ որոշման ժողովոյն :

Ե. Սեծագոյն մասամբ որչա՞մ տրուած խնդրոց անմիջական գործադրութեանը հոգ տանի Ս. Նախագահին հետ խորհրդակցելով :

Զ. Սահմանադրութեան 429 յօդուածին համեմատ Խորհրդոց և Հագարարձութեանց վերաբերեալ խնդիրներն իրենց յանձնել և հսկել որ անոնք անյարաղ լուծուին :

14. Առեւտրային պարտքն է Օրակարգին և արձանագրութեանց հրդուձեանը հսկել :

15. Ժողովոյ որոշումները նոյն օրուան նստին մէջ յատուկ տուձարի մը մէջ Առեւտրային կոլեձնէ համապատասխան կերպիւ արձանագրուելն կարք : նոյն օրը Վիւանին կողմէն

պիտի ստորագրուի և Ս. Նախագահին յանձնուի : որպէս զի Ս. Նախագահը կարողանայ անոնց անմիջական գործադրութեանը հսկել :


16. Ժողովոյն սովորական ասեւնագրութիւնները Վիւանագետը կը խմբագրէ , և հետեւեալ նիստերուն մէջ կարգացուելով 159 յօդուածին մէջ նշանակուած արձանագրութեանց համաձայն ըլլալը ժողովականաց դիտողութիւններէն կարք ստագուելով Վիւանի կողմէն կատրագրուի : Առեւտրութեանց մէջ ժողովոյ որոշումներն արձանագրուելն զատ նաև պիտի նշանակուին սոյն ժողովականաց խօսքերը : որք որոշմանց հսկաւակ կամ տարրեր կարծիք յայտնած են :

17. Առեւտր քայուելն կարք ոչ ոք կըրնայ ներս մտնել ասանց հրատիրանաց Առեւտրայեալի :

18. Ժողովոյ որոշմամբ գրուած անկէ Պաշտօնական գրութեանց թէ տաձիւրէն և թէ հայերէն պատձենները ժողովին օրք գրասեղանին վրայ պիտի դաձուին . և ժողովականներէն ուղղոր պիտի կրնայ դաձնոր աչքէ անցնել :

19. Քաղաքական ժողովը քաղաքական Մասնագետով մը կը կարգէ ժողովոյ անդամներն : Քաղաքական Մասնագետը իրեն զրկուած խնդիրները կը բնէ և իր կարծիքը երբև առաջարկութիւն Քաղաքական ժողովոյ որոշմանը կը յանձնէ : Խնդրոց մը որոշմամբ միայն Քաղաքական ժողովոյ մէջ կրնայ տրուի :

Հաստատուեալ և փտերացեալ Քզգային վարչարեան Փաղաքական Ժողովին ինկատ ԻՔ. Լ Ի 24 Յունվար 1875



ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՆԵՐՔԻՆ ԲԱՐԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱԶԳ. ՊԱՏՐԱԿԱՐԳԱԿԱՆՆԵՐ

ՊԱՏՐԱԿԱՐԳԱՆ

Ե Ի

ՊԱՏՐԱԿԱՐԳԱՆ

Ա.

Սրբազան Պատրիարքն Ազգային Ժողովոյ Նախագահն է և անոնց որոշմանց գործադիրը : Միանգամայն Պատրիարքարանի գործոց ընթացքին բարեկարգութեան հսկող և պատասխանատու է խորհրդական ունեւարով իւր փոխարդն :

Բ.

Պատրիարքական Փոխանորդը խորհրդական է Սրբազան Պատրիարքին , և իւր յատուկ պաշտօններէն զատ փոխանորդարար կը հսկէ նաև Ազգային Ժողովոյ որոշմանց գործադրութեան : Միանգամայն պատասխանատու է Պատրիարքարանի ներքին բարեկարգութեան : Պատրիարքական Փոխանորդը ներկայ կը գտնուի Կրօնական , Քաղաքական և Խառն Ժողովոց նիստերուն :

Գ.

Պատրիարքարանն ունի նաև երկու զուխաւոր պաշտօնեաց , Գալուքէհասին և Վիւանագետն :

Դ.

Պատրիարքական Փոխանորդին , Գալուքէհասին և Վիւանագետին

ընկալելն և Վիւանագետին ընտրութիւնը Սրբազան Պատրիարքին առաջարկութեամբ Քաղաքական Ժողովը նիստադալթեան կառնու և պէտք եղածը կը տնօրինէ :

Ե.

Գալուքէհասին Կատարութեան և Պատրիարքարանի մէջ եղած յարաբերութեանց գործակատար պաշտօնեան ըլլալով , պարտական է Սրբազան Պատրիարքին և Փոխանորդ Զօր կողմէն իրեն յանձնուած գործերը կանուաւոր կերպով կատարել և անկէ օր արդիւնքը դրով հաղորդել , որպէս զի ժողովոց ներկայացուի :

Գալուքէհասին ներկայ կը գտնուի Քաղաքական և Խառն Ժողովոց նիստերուն :

Գալուքէհասին ունի մէկ օգնական մը թէ Բ. Կրան և թէ Ոստիկանութեան վերաբերեալ գործոց համար :

Զ.

Վիւանագետը Վիւանական գործոց կարգադրութեան գործադիր և պատասխանատու պաշտօնեայն ըլլալով , պարտական է իւր իրաւասութեան տակ գտնուած գրասենեակներուն մէջ եղող պաշտօնէից պարտքերն անթերի և անյարաղ գործադրել տալ :

Վիւանական պաշտօնէից փոփոխութիւնն ու յաւերանը Վիւանագետին առաջարկութեամբ Քաղաքական Ժողովը նիստադալթեան կառնու և պէտք եղածը կը տնօրինէ :

Է.

ԴԻՒԱՆԱՏՈՒՆ

Կեդրոնական Վիւանագետն երեք զրասենեակներէ կը բաղկանայ , որք են՝ Խմբագրութեան , Արձանագրութեան և Վիձակագրութեան գրասենեակ , ընդ հսկողութեամբ և պատասխանատուութեամբ Վիւանագետին :

ԻՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Սոյն գրասենեակին մէջ կը խմբագրուին այն ամեն Հայերէն Տոմարէն և Գաղղիարէն գրութիւնք , որ կը պատկանին Երեսօրհանուկան , Կրօնական և Քաղաքական Ժողովոց որոշմանց :

Դիւանագրան ունի իրեն հետ երեք խումբազիր դիւանագրողներ , մէկը Կրօնականի , մէկը Հայերէնի և Գաղղիարէնի և երրորդը Տոմարէնի յատկացեալ , որոց պաշտօնն է պիտուարանդէս դիւանագրողին կողմէ յանձնաբարեալ խմբագրական գործոց պարտադիր :

Սոյնպէս ունի ուրիշ երեք դիւանագրողներ , որոց երկուքին պաշտօնն է Հայերէն խմբագրութեանց ընդօրինակութեան և ուրիշ զըրրութեանց պաշտապիլ :

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Սոյն գրասենեակին մէջ կործանագրուին Պատրիարքարան եկած այն ամեն թղթերը , զորս Սրբազան Պատրիարքը կամ իւր Փոխանորդը կարգալէ ետև օրուան թուականը և որ ժողովոց որ անկ են , վրան նշանակելով կը զրկեն Արձանագրութեան գրասենեակը :

Արձանագրութեան պաշտօնեայն նոյն թղթաց համառօտութիւնն ընդհանուր տուժարի մը մէջ կորգահամարաւ արձանագրելէ ետև կը զրկէ իրենց պատկանեալ տեղերն՝ անոնցմէ ըստօրագրութիւն անկերով . և երբ պատասխաններն ալ խմբագրութեան դիւանին ստանայ , արձանագրութեան տամարին մէջ պէտք եղած գործողութիւնները կատարելէ ետև կը յղէ իրենց տեղերը :

Վերջուպէս Արձանագրութեան պաշտօնեայն պատասխանատու է Դիւանագրան առջև Պատրիարքարան մտած ու ելած ամեն թղթոց համար , որոց պահպանութիւնն իրեն յանձնեալ է :

Արձանագրութեան պաշտօնեայն ունի իրեն հետ մէկ օգնական մը :

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Սոյն գրասենեակին պաշտօնն է Ա. Վանօրէից , եկեղեցեաց , և ազգային

որ և է հաստատութեանց թէ՛ շարժական և թէ՛ անշարժ ստացուածոց վրայօք մանրամասն տեղեկութիւններ հաւարել և կանոնաւոր սուժարներու մէջ արձանագրել :

Բ. Ընդհանուր ազգահամար մ'ուեննալ , որ պիտի պարունակէ ամեն ազգայնոց արձանագրութիւնը , հանդերձ վիճակագրութեամբ պատասձած ծննդոց , վախճանմանց և ամուսնութեանց :

Վիճակագրութեան պաշտօնեայն նոյն տեղեկութիւնները պիտի հաւարէ վանահայրներէն , գաւառական վարչութիւններէն և Մայրաքաղաքի թաղական խորհուրդներէն , պէտք եղած հրահանգներն ու ցուցահանգներն անոնց հազարգելով :

Ը.

ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԶԻՆՂԵՐԸ

Դատաստանական Խորհուրդն ունի օրէնսգէտ և տաճկագէտ պաշտօնեայ մը , որ այցելութեամբ նոյն խորհուրդին դործողութեանց օրինական և խմբագրական մասերը պիտի կատարէ , և մէկ ալ մնայուն դիւանագրող մը՝ որոց պաշտօնն է դատական և ամուսնական արձանագրութեանց պարտապիլ և փոխանորդարանի դիւանագրարութիւնը կատարել :

Տնտեսական Խորհուրդը և Երևոտական Հոգաբարձութիւնը միանալով՝ ունին մէկ դիւանագրող , մէկ համարակալ , մէկ գանձապահ և մէկ Անցուցրատան պաշտօնեայ , որ Վարչութեան հրահանգին համեմատ իրենց պաշտօնը պիտի վարեն :

Ուսումնական և Վանօրէից Խորհուրդները և Կապիաց Հոգաբարձութիւնը միանալով , ունին մէկ դիւանագրող մը , որոց պաշտօնն է նոյն երեք ձեղերուն վերաբերեալ գրական բոլոր գործողութիւնները և միանգամայն Ուսումնական Խորհրդոյ արձանագրութիւնները և վանական կարգածոց ու Ս. զգին նուիրեալ կապիաց արձանագրութիւնները կատարել յատուկ սուժարներու մէջ :

Սոյն խորհրդոց և Հոգաբարձութեանց պաշտօնից ընարութիւնն անոնց առաջարկութեամբ

Քաղաքական Ժողովը նկատողութեան կառնու և պէտք եղածը կը անօրինէ :

Թ.

Պատրիարքարանի խոհանոցը բոլորովին վերցուած ըլլալով , ամեն պաշտօնեայր իրենց բաակէն պիտի ընեն ուսեստի ծախքերնին , և քարտպաններէն ու սենեկապաններէն զտա ուրիշ մէկը չ'պիտի կենայ դիւերներն 'ի Պատրիարքարան :

Ուստի Ետի Գ. Ե. Ս. Յակոբոց վանուց մէջ Հիւրանոց տնտեսութեամբ յարկ մը յատկացած է , որ պիտի երթան Սրբազան Պատրիարքին յանձնարարականով 'ի Պատրիարքարան հիւր մտալու ստիպեալ անձինքը :

Սոյն հիւրանոցի ծախսոց համար կեղրանական սնտուկէն ամսական հազար զրու յատկացած է Հիւանդանոցի սնտուկին :

Թ.

Պատրիարքարանն ունի փոխանորդ Հօր հսկողութեան տակ ընդհանուր վերակացու մը , որուն յանձնուած է Պատրիարքարանի բոլոր կաշկորասիրը , և որ պատասխանատու է ներքին մարտութեան և ապահովութեան , և իւր հսկողութեան տակ պիտի ունենայ

Մէկ սենեկապան Դիւանատան համար
Մէկ « Փոխանորդարանի »
Երկու տղատար ծառայութեան և մարտութեան համար :

Հինգ վեց բարսպան (եռասքճի) , որոց մէկը զլախ պիտի ըլլայ , և ամենքը մէկէն ընդհանուր վերակացուին հսկողութեան տակն են :

Մէկ ալ գունապան :
Վերոյիչեալ սպասարարաց փոխօրինակներ Փոխանորդ Հայրը անօրինելէ ետև՝ պատճառները Քաղաքական Ժողովոց կը հազարգէ :

ԺԱ.

ԿԱՆՈՒՔ ՎԱՍՆ ՊԱՅՏՕՒՆԷԹ

Առանց բանաւոր պատճառի որ և է պաշ-

տօնեայ չ'պիտի գրկուի իւր պաշտօնէն :

Ազգին ծառայութեան յատկացեալ պաշտօնեաներն երբ երկար ծառայութենէ ետև ծերութեան կամ ցաւազարութեան պատճառաւ անկարող լինին այլ ևս իրենց պաշտօնը շարունակելու , ըստ հետեւեալ հրահանգի գաղարման ամսական պիտի ստանան մինչև ցճա՛ Ս. զգային Սնտուկէն :

Արտ.՝ որ 10 տարի շարունակ ստանց բարոյական պահապանութեան և հաւատարիմ ծառայութեամբ անկարող գտնուին , պիտի ստանան իրենց ամսականին հարիւրին էրեսուեր , իսկ 10 տարիէն աւելի ծառայողներուն գաղարման ամսականը համեմատաբար տարուէ տարի հարիւրին մէկ պիտի յաւելնայ , այնպէս որ ամբողջ երեսուն տարի ծառայողները իրենց ամսականին հարիւրին յիսուն և քառասուն տարի ծառայողները հարիւրին վաթսուն գաղարման ամսական պիտի ստանան :

ՀՐԱՆԱԳՐ ԿԱՄ ԿԱՆՈՒՔ ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ Ա. ՀԱՄԱՐԱԿԱԿ

1. Պատրիարքարանի համարակալը մարտի ձեռաստար մը կամ յիշատակարան մը պիտի բռնէ և ամեն դրամական գործողութիւնները պատասձածին պէս հոն պիտի արձանագրէ թէ՛ մուտք բոլոր և թէ՛ ելք :

2. Ձեռատետրէն անմիջապէս դանազան օժանդակ տեսարաններու մէջ պիտի անցնէ պատահած գործողութիւնները , օժանդակ տեսարաններուն երեսահամարները ձեռատետրին մէջ և ձեռատետրին երեսահամարը օժանդակներուն մէջ նշանակելով :

3. Ամեն օր ձեռատետրին մէջէն նման գործողութիւններն անփոփելով գումարները կրկնատուժարի ոճով օրինաւորապէս օրհաչիւր փոխադրելու և անկէց ալ մայր հաշիւն անցնելու է :

4. Ամեն ամազլուխ Տնտեսական Խոր-

հուրդ և Ելմտական Հոգարարձութիւնը սնտուկի տետրակը պիտի վաւերացնեն իւրարանչիւր գործուրթիւն իր հակալիւսն հետ բողոքտուելով :

5 . Նաև համարակալը արձանագրութեան տետր մը պիտի ունենայ Պատրիարքարանի սընտուկը աւանդ ձգուած գոյից համար , ուր իւրաքանչիւր աւանդին մուտքն ու ելքը կանոնաւորապէս պիտի արձանագրուին մտից պատճառաւ և ելքին հրամանովը , և այս աւանդները ծրարեալ և Պատրիարքարանի կնքովը կնքեալ պիտի ըլլան և աղագային սնտուկին մէջ պիտի պահուին :

Նաև պիտի ունենայ տուխա վճարեալ գումարներու հոմար տետրակ մը , ուր ամեն աւիտի վճարմանները թէ հաշուայ մը մէջ իրարու տակ նշանակուած պիտի ըլլան և թէ զատ տեղերու մէջ և իւրաքանչիւր աւիտի վճարմանը լրանալուն պէս դադարեալ են , բոլը նշանակելով իրենց բուն արձանագրութեան տեղերը :

6 . Համարակալը պարտաւոր պիտի ըլլայ ամեն երեկոյ թղթի մը վրայ նշանակել սնտուկին մուտքն ու ելքը և սնտուց տարբերութիւնը նաև աւիտի վճարմանները . այս թուղթը պիտի ցուցնէ Պատրիարքարանի սնտուկին մէջ գտնուած պատրաստ գումարը , զոր ինքն ստորագրելով և գանձագրահին կնքել տալով պիտի յանձնէ Սրբազան Պատրիարքին :

7 . Սրկղեւու եկամ բոլոր գումարները նախ Համարակալը պիտի հաշուէ յատկապէս սրտաւորուած թղթի մը վրայ սնտու համեմատ պիտի ընդունի գանձագրահը և պիտի կնքէ նոյն թուղթը . այս թուղթը դարձեալ համարակալին գալով պիտի արձանագրէ և անգորրագրիւր համարակալը պիտի տայ և Ելմտական Հոգարարձութեան կնքովը վաւերացնելէն ետքը պէտք եղած գործողութիւնները պիտի կատարուին :

8 . Նաև վճարման համար եկամ հրամարնադիրը նախ Համարակալը պիտի արձանագրէ և նոյն հրամանագրերուն վրայ արձանագրեալ բանով պիտի ստորագրէ և ետքը գանձագրահը պիտի վճարէ , վճարման թղթերն ալ յատկապէս պատրաստուած ըլլալու են :

9 . Ամեն տարեկալս մայր հաշիւն քա-

ղելով պիտի պատրաստէ տարեկան հաշուեցոյցը և Տնտես . Խորհրդայ և Ելմտական Հոգարարձութեան պիտի ներկայացնէ և սնտուց ստուգել տալով նոյնը պիտի յղուի առ Քաղ . Ժուրջն :

Բ .

ԳԱՆՁԱՊԱՀ

10 . Գանձագրահը միայն սնտուկի տետրակ մը պիտի բռնէ որուն մէջ մուտքն ու ելքը կանոնաւոր կերպով պիտի նշանակէ :

11 . Մտից համար միշտ իրեն կնքը պիտի գտնուի համարակալին քովը և եկից համար ալ իր քով հրամանագրերը պիտի գտնուին . Համարակալին ստորագրեալ :

12 . Ամեն երեկոյ իր տետրակը Համարակալին սնտուկին տետրին հետ պիտի բողոքաւ և առ Սրբազան Պատրիարքն տրուած հաշուեթուղթը պիտի կնքէ : Գանձագրահը պիտի ունենայ նաև երկու տետրակներ ալ , մին Պատրիարքարան աւանդ ձգուած գոյից համար և միւսը աւիտի վճարմանցը համար :

Այս տետրակներուն ձեւերը համարակալին այս մասին բռնած տետրակներուն ձեւովը պիտի ըլլան :

13 . Գանձագրահը ինքնին մէկուն բան մը չ'պիտի վճարէ , բայց միայն իրեն յղուած հրամանագրերու վրայ՝ որք արձանագրեալ և ստորագրեալ են Համարակալին :

Գ .

ԱՆՑԱԳՐԱՏԱՆ ՊԱՇՏՈՆԵԱՅ

14 . Անցագրատան պաշտօնեայն իրեն եկամ գործերը նախ Համարակալին պիտի զրկէ , որ Թուղ . Խորհրդէն տրուած ծանուցադրին համեմատ Պատրիարքարանէն աւանդելիք սուրբը հաշուէ և սրաշտօնական թղթի մը վրայ նշանակէ ստորագրելով , որուն համեմատ գանձագրահը կրնուի գրամը և կը կնքէ թուղթը , գանձագրահին կնքեալ թուղթը համարակալը պահելով պաշտօնական անգորրագրիւր կուտայ և ասոր վրայ Անցագրատան պաշտօնեայն սրաշտօնական ծա-

նուցագրիւր կը գրէ և համարակալն ալ դայն կը կնքէ պաշտօնական կնքով :

15 . Անցագրատան Պաշտօնէին բոլոր գործողութիւնները այս կերպով կը կատարուին :

16 . Անցագրատան պաշտօնեայն տետրակ մը պիտի բռնէ ուր պիտի նշանակէ իր գրած ծանուցադրերը իրենց տեսակով , թուով և անձանց անուններովը , այս տետրակը պիտի յղուի մէկը դիւրութեամբ յայտնուող տեսակի որքանի տեսակ ծանուցադիր գրած է և գանձագրահը իւրաքանչիւր տեսակին համար ս'ըջափ գրամ ընդունած է և համագրուելու ս'ըջափ է :

Դ .

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՒՑ ԵԼՄՏԱԿԱՆ

Պատրիարքարանի սնտուկին մուտքերն են հետևեալ հատոյթները .

- Ա . Կալուածական ծանուցադրերը .
- Բ . Հանձնարհորդաց անցագրի և արհեստարարաց հրամանագրի վիտայիւմը :
- Գ . Նշանատուութեան և հրամանի հատոյթ .
- Դ . Գաւառական մուգաթա ըսուած և մայրաքաղաքի և կիկղեցիներէն աւանուած քանչիւր ըսուած տուրքերը .
- Ե . Կեդրոնական տուրք .
- Զ . Զանազան հատոյթներ ,
- Է . սնտուկին ելքն են ,
- Ա . Պատրիարքարանի պաշտօնից ամառկանք .
- Բ . Յատկացեալ ամսականք .
- Գ . Նշանատրի ծախք .
- Դ . Զանազան կամ ընդհանուր ծախք .

18 . Կալուածական ծանուցադրերու համար յատկապէս Ելմտական հոգարարձութեան կողմէն թուագրեալ և ստորագրեալ 50 , 110 , 160 և 260 դրուշուց անգորրագրեր պէտք են , որք համարեով Համարակալին տրուելու են իրան ստորագրութիւն առնելով , այս ստորագրութիւնը Տնտեսական Խորհրդայ և Ելմտական Հոգարարձութեան դիւանը պիտի մնայ և այս գործողութիւնը պիտի կատարուի ըստ 14 րդ յօդուածի :

19 . Հանձնարհորդաց անցագրի և արհեստարարաց հրամանագրի վիտայիւմի հատոյթը ամբողջապէս Հիւանդանոցի վերաբերելով , Հիւանդանոցի Հոգարարձութեան կողմէն թուագրեալ և ստորագրեալ անգորրագրեր պէտք են , որք համարեով համարակալին տրուելու են իրան ստորագրութիւն առնելով , այս ստորագրութիւնը Հիւանդանոցի Հոգարարձութեան քով կը մնայ և այս գործողութիւնը կը կատարուի ըստ 14 րդ յօդուածի և շարժէ շարժի կամ սուկէ ամիս համարակալը Հիւանդանոցի Հոգարարձութեան հրամանին վրայ հաշիւը կատարելով և ստորագրելով և ստորագրել տալով Հիւանդանոցի Պաշտօնէին գանձագրահը կը վճարէ Հիւանդանոցի վերաբերեալ այս հատոյթը :

Համարակալը Հոգարարձութեան հրամանագրիւր ստորագրել կուտայ ստակն ընդունող Պաշտօնէին գումարը մէջը նշանակել տալով :

20 . Նշանատուութեան հատոյթին համար փոխանորդ Հօր և Հիւանդանոցի Հոգարարձութեան կողմէն կարգեալ պաշտօնէին ստորագրութեամբ աստիճանը , նշանաւորներուն անունը , մականունը և որիչ պարագաները նշանակեալ թուղթ մը գալ պէտք է համարակալին , որ ըստ կանոնի հաշուելու է և հաշիւը նոյն թղթին վրայ նշանակելով ստորագրելու է . այս թղթին համեմատ գանձագրահը գրամն առնելու և ըստ ստորագրելու է , այս թուղթը Համարակալը պահելով պաշտօնական անգորրագրիւր կնքեալ և ստորագրեալ յանձնելու է և ասիկէ ետքը Փոխանորդ Հայրը որիչ պաշտօնական արձանագրութիւնները և գործողութիւնները կատարելու է :

Հրամանագրի համար ալ այս ձեւը բռնելու է :

Հիւանդանոցի բաժինն ալ պիտի վճարուի 19 րդ յօդուածին համեմատ :

21 . Գաւառական մուգաթա և մայրաքաղաքի և կիկղեցիներէն քանչիւր անուամբ տարեկան յատկացեալ տրոյց համար յատուկ անգորրագրեր շինել պէտք է , որք համարակալին քով կը մնան և երբ վճարուի և գանձագրահը համարակալին շինած հաշուեթուղթը կնքէ , հա-

մարակալը վաւերացեալ և կիբեալ անդորրագրերէն կուտայ :

Մուգաթայի վերաբերեալ անդորրագրերը թէ՛ Սրբազան Պատրիարքը և թէ՛ Երմուսկան Հոգաբարձութիւնն ստորագրած ըլլալու է :

Իսկ քանչէրի անդորրագիրը միայն Երմուսկան Հոգաբարձութիւնը կստորագրէ :

22. Կեդրոնական տուրքը՝ տրոյ Պաշտօնէին ձեռք կը հաւաքուի համարակալէն ընդունած անդորրագրերուն վրայ : Տրոյ անդորրագրերը Երմուսկան Հոգաբարձութեան կողմէն կը պատրաստուին, որք թուագրեալ և ստորագրեալ ըլլալու են և համարեալ յանձնուելու են համարակալին իր ստորագրութեան վրայ, այս ստորագրութիւնը Տեսնս . Խորհրդոյ և Եւմուսկան Հոգաբարձութեան գիւանը պիտի մընայ :

Երբ տրոյ զաշտօնեայն հաւաքած գրամները կեդրոնական մատուկին կը յանձնէ, համարակալը գանձապահէն ստորագրութիւն մը առնելով տրոյ արշտօնէին անդորրագիր կուտայ :

23. Գանձազան հասոյթներն են .

Ա. Երմուսկան համար Պատրիարքարան գիւմոյներէն առնուած մէկ մէկ մէճիախէն՝ իրիւ ծախք գրուած թէ՛ գրէրէին :

Բ. Որ և իցէ ստորագրութեանց և մկրտութեան վաւերացմանց համար առնուած մէկ մէկ մէճիախէն :

Գ. Փոխանորդագրի վաւերացման համար առնուած երկուքական մէճիախէն :

Դ. Գաւառաց Սաաջնորդաց և գաւառական ազգային ժողովոյ վաւերացման համար զրկուած Պատրիարքական կոնդակներէն իրենց մուգաթային վրայ 10 առ 0/0 նմանապէս մայրաքաղաքիս քարոզիչներուն և ՚ի վաւերացումն Թաղ . Խորհրդոյ տրուած կոնդակներուն համար իրենց քանչէրիին վրայ 10 առ 0/0 առնուած տուրքը :

Ե. Մայրաքաղաքիս Թաղ . Խորհրդաներէն տրուած կարուածական վկայագրերուն համար յատուկ դրօշմաւոր և բունով (բօշան) թրղութիւն կը պատրաստուին Երմուսկան Հոգաբարձութեան կողմէն կիբեալ, որոյ համար 40 առ 0/0 կան փարայ կառնուի Թաղ . Խորհրդաներէն :

Ձ. Պատաստանական հասոյթ .

Ստոյ համար դիւանական հասոյթ անունով անդորրագրերը ըլլալու են Երմուսկան Հոգաբարձութեան կողմէ ստորագրուելու և թուագրեալ որք համարեալ յանձնուելու են Համարակալին իրմէ ստորագրութիւն առնելով և իւր ստորագրութիւնն ալ Տեսնսկան և Երմուսկանի դիւանը պահելով պէտք եղած ատենը ասոնցմէ կուտայ վերալիչեալ կանոնաց համեմատ բունին մէջ թէ՛ առնուած ստակը և թէ՛ խնդիրը նշանակելով, իսկ տրուած մատին վրայ միայն ըստակը նշանակելով բայց պէտք է որ բունին մէջ նաև վճարողն ալ ստորագրէ :

24. Սմեն ամսագլուխ համարակալը կը պատրաստէ պաշտօնէից ամսականները պարուհակող թուղթ մը, ուր պիտի նշանակուած ըլլան բոլոր պաշտօնէից անունները զիմոյց իրենց ամսականը, այս թուղթը Երմուսկան Հոգաբարձութեան վաւերացեալ պիտի ըլլայ և Սերբաղան Պատրիարքը տեսնելով հրաման կընէ ՚ի վճարում՝ ամբողջապէս կամ մասամբ 0/0 սյուշափ ըսելով սնտուկին դրամական վիճակին համեմատ, այս թուղթը համարակալին ալ ստորագրելու են և գանձապահին կը յանձնուի և իւրաքանչիւր պաշտօնեայ իր առած գրամը իր անունը զիմայը գրելով կստորագրէ :


Սմեն առեն բոլոր Պաշտօնեայք հաւասարապէս պիտի ընդունին իրենց աւականները և երբ ամսականք թերհաշիւ վճարուին, ամենին ալ նոյն համեմատութեամբ թերհաշիւ պիտի առնեն :

25. Ուրիչ ամեն սովորական ծախքերու համար Տեսնսկանին ու Երմուսկանին համար թիւն առնելով և անոնց բնութեամբ ստորագրեալ հաստատագրերու վրայ Ս . Պատրիարքը հրաման կընէ և Համարակալը արձանագրած ըլլալուն համար ստորագրութիւնը դնելն ետըր գանձապահը կը վճարէ առնողին նոյն թուղթը ստորագրել տալով :

26. Տեսնս . Խորհրդան և Երմուսկան Հոգաբարձութիւնն ամենին անձամբ ծախք ը

պիտի ընեն, այլ Պատրիարքարանի Պաշտօնեայք պիտի ընեն իրենց հրամանաւ և միշտ ինչքան որ անուի կամ շինուի ստակէն կամ շինողէն իրիւ հաստատագիր ստորագրութիւն առնելու է տրուած նիւթերը կամ շինած բանը մէջը գրուած ըլլալու պայմանաւ :

27. Թէ Պատրիարքարանի և թէ Թաղ . Խորհրդաներէ և մրտարներէ տրուած ծանուցագրերը պէտք է որ տեղութեան յատուկ դրօշմը առնեալն զատ նաև բունաւոր և Պատրիարքարանի կողմէ տրուած ըլլան պէտք եղած տեղերը, և այս ամեն ծանուցագրերը որ միշտեալ կըրտով չեն, ապօրինաւոր կը համարուին, և այս աղղային կարգադրութիւնը հարկ եղած տեղերը պէտք է ծանուցանել :



Ժողովը նկատելով որ մայրաքաղաքիս թագական խորհրդներուն և երեսփոխանութեան ընտրութեանց առնէ միշտ խոտովութիւնը և զժտութիւնը պահաս չէ, այս խոտովութեանց առջևն առնելու նպատակաւ ընտրական զործարարութեանց համար հետեւեալ հրահանգը պատրաստեց :

ՀՐԱՀԱՆԳ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆՑ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Թաղական խորհուրդը Ընտրողական ժողով կը կազմէ ընդ նախագահութեամբ թաղին Քարոզչին կամ անոր չեղած տեղ՝ Սեպեհրիցուն :

2. Թաղական խորհուրդը զաղանի բուէարկութեամբ երեքէն մինչև վեց թաղեցիներ կը ընտրէ, որք Թաղական խորհրդոյ հետ ի միասին կը կազմեն Ընտրողական ժողովը :

3. Ընտրողական ժողովոյ անդամը ընտրութեան իրաւունք և հանգամանք առնեցող պատուաւոր թաղեցիներէն պիտի կարմուին :

4. Ընտրողական ժողովը ընդ նախագահութեամբ Քարոզչին կամ Սեպեհրիցուն կը կազմէ իւր Գիւանը, որ կրնայ Թաղական խորհրդոյ դիւանին մէջն կամ զատ կողմէ ըստ համարեան Ժողովոյն :

5. Ընտրողական ժողովը թաղին մէջի ըստ Սահմանագրութեան ընտրողութեան իրաւունք առնեցողներն ստակելով, այսու բնի կարգաւ ընտրողաց ցանկ մը կը պատրաստէ, նշանակելով ըստ կայելոյն ընտրողաց անունը, մակաւունքը, արհեստը, փողոցը և տանը թիւը :

Այս ցուցակը առ նուազն ութ օր կը կախէ Թաղական խորհրդարանը ժողովրդեան տեսանելի կերպով : Հրապարակելով ծանուցումը որ դիտողութիւն առնեցող անձինք կամ անձամբ Ժողովոյն ներկայացնեն իրենց դիտողութիւնը, կամ բանկալը զրուած յատուկ ստակով մը մէջ գրութեամբ, ուր պիտի անունին ստորագրեն, և իրենց բնակութեան վաղոցն ու տանը թիւը նշանակեն : Սնանուն դիտողութիւնը ընդունելի չեն :

6. Ընտրողական ժողովոյ դիւանը՝ ներկայացեալ դիտողութիւնը բնութեան կտոնու, և Ընտրողական ժողովոյն գիտութեամբ յաւելուած կամ զեղչ կրկայ ընտրողաց ցուցակին վերայ, ըստ ընկալեալ օրինաւոր տեղեկութեանց կամ դիտողութեանց :

7. Ով որ մինչև բուէարկութեան նախընթաց տրրաթ երեկոյ դիտողութիւն մը չէ ներկայացուցեր Ընտրողական ժողովոյն ընտրողաց և ընտրելոյց ցանկերուն վրայ, բուէարկութեան օրը կամ յետոյ առ մատին իրաւունք չառնեալ դիտողութիւն կամ բոլոր ներկայացնելու :

ԸՆՏՐՈՂՔ

8. Ընտրողութեան իրաւունք առնին թաղին այն բնակիչները միայն որոնք Կեդրոնական տրոյ թաղային սեպիւն մէջ անունին արձանագրել առած են :

9. Թաղական ընտրութեան մասնակցելու համար Սահմ . 55դ . յօդուածոյ համեմատ իրաւունք առնին անհաս որ 25 տարին քաջացած է և ըստ 67դ . յօդուածոյ Սահմ . ընտրողական իրաւունք գրկուած չէ :

10. Երեսփոխանական ընտրութեան համար ըստ Սահմ . 65-66 և 67դ . յօդուածոյ ընտրողութեան իրաւունք առնին այն թաղեցիք որ 25 տարին քաջացած, Ուսանեան հպատակ և

տարեկան 75 շրջ ազգային տարբ տուող են . և որ քրէական յանցանք դատարարական չեն . Սգգային գործոց մատակարարութեան մէջ նեն գութեամբ բանուած չեն , Սգգային ժողովոց մէկուն կողմէն Սգգային գործոց չգործածուելու փճիւր ընդունուած չեն , Տերութեան դատարան ներուն կողմէն զգաւտացուցիչ պատժոյն պայ մանածամբ լրացուցած են , վերջուպէս խեղագա բութեամբ անբաւական ճանչցուած չեն օրինաւ ւոր կերպիւ :

ԸՆԾՐԵԼԻՔ

11 . Թաղական խորհրդոց համար ընտրելի են անոնք որ Թաղական խորհրդոց ընտրող ըլլալու իրաւունք ու հանգամանքներ ունին : Իսկ երեսօխոսանութեան համար ընտրելի են ըստ Սահմ . 68 դ . յոդուածոց անոնք որ 30 տարին լրացուցած են , Օսմանեան հարստակ են , Տէրութեան օրինացը տեղեակ , և ազգային գործոցը հմուտ են և ընտրողութեան իրաւունքին զրկուած չեն , ըստ 67 դ . յոդուածոց Սահմա նագրութեան :

12 . Ընտրողական ժողովը զազանի բուէարկութեամբ ընտրելեաց ետապատիկ թուովը ցանկ մը կը պատրաստէ , զոր կը կոխէ Եկեղեցոյն բանկարը՝ առ նուարն 3 օր , ի տես ժողովըղեան , ծանուցանելով որ ընտրողը ազատ են այն ցանկին դուրս ալ ընտրելեաց բուէ սալ :

ՔՈՒԷԶԱՄԱՐ

13 . Ընտրողական ժողովոց Նախագահը բուէարկութեան օրոչեալ օրէն առաջ հաստաբակիչ կուտայ ի լրագիրս և Եկեղեցոյն ու թաղին զգորցներուն դռնիցը ծանուցում բակցներով , և յիշելով հրոժարեալ երեսօխոսանաց կամ թագականաց անունը , անոնց վերընտրելի ըլլալը , ընտրուելիք երեսօխոսանաց կամ թաղականաց թիւն և ընտրելութեան արցմանները , և բուէարկութեան և բուէհամարի օրոչեալ օրն ու ժամը . և թէ՛ մինչ ի բուէարկութեան ուրբաթ երեկոց ընտրողաց և ընտրելեաց ցանկին վրայ

հարկէ դիտողութիւններ ներկայացնեն , և թէ յիշեալ արցմանածամէն ետքը ոչ որ իրաւունք ունի դիտողութիւն ներկայացնելու :

14 . Եթէ ընտրողն իւր բուէն անձամբ չըկարենայ ըրել , պէտք է ստորագրեալ նամակաւ մը զայն զրկել , կամ պահարանի մը մէջ դնել և արհարանին վրայ իւր անունը ստորագրել . նամակարերն ևս պարտաւոր է միանգամայն նոյն պահարանին վրայ ստորագրել այս կերպով « այս ինչ անձին կողմէն կամակարեր » (ստորագրութիւն) : Եթէ նամակարերը գրեւ չգիտեր՝ Ստանադարից կը դրէ պահարանին վերայ անոր անունը , և ան ալ խաչ նշան մը կը քաշէ անուանը ներքև ի ներկայութեան Ընտրողական ժողովոց :

15 . Եթէ բուէն օրոչեալ ժամանակէն ետքը զայ՛ ընդունելի չէ :

16 . Եթէ բուէթուղթին մէջ ընտրելեաց թիւէն աւելի անուններ գտնուին՝ բուէն կարգաւ ընդունելի է բայց աւելորդ անունները և ստորագրեալ բուէթուղթերը ընդունելի չեն :

17 . Ընդունելի չէ այն բուէն՝ որ ընտրելութեան հանգամանքներէ զուրկ անհասի մը տրուած է :

18 . Բուէարկութիւն կատարուելիք կիրակուան նախօրէնից շաբաթ տառուտ Ընտրողական ժողովը կը գումարուի , եղեալ դիտողութիւնները ի նկատի կառնու , վերջնական կերպով ընտրողաց ցուցակին վրայ անօրէնութիւններ կընէ՝ եթէ նոր հարկ կայ . առնուագրութեան մէջ կը նշանակէ . և բուէարկութեան ժամանակ ներկայ գտնուելիք բնիչներն ու անգամները կարչի :

19 . Բուէարկութեան ժամանակ Ընտրողական ժողովոց անգամը ներկայութեան տուումարին մէջ անուններն նախ կատարագրեն , և յետոյ մեծագոյն մասամբ ստուգելով բուէտուփին դատարկ լինելն , կը կնքեն զայն պաշտօնապէս և բուէարկութեան սկիզբէն մինչև վերջը կը հակեն բուէտուփին վրայ :

20 . Բուէարկութիւն կը ներկայացնեն իրենց բուէն Ընտր . ժողովոյն կամ անոր բնիչացը , որ ստուգելով մէկ բուէթուղթի տակի չըլլալը՝

պարունակութիւնը չը կարգացուելու երանակաբուէտուփին մէջ կը ձգեն առաջի բուէարկութիւն կամ նորս ստորագրել կուտան ընտրողաց տուումարին մէջ : Եւ եթէ բուէարկուած գիր գրել չը գիտեր , Ստանադարից ի ներկայութեան քուէարկութիւն կամ նորս նամակարերին կը նշանակէ բուէարկութիւն կամ նամակարերին գրել չը գիտանալուն պարտաւոր ստորագրած չըլլալը , և նախաչ նշան մը կը քաշէ ներքը :

21 . Նամակաւ եկած բուէները կը նշանակուին ընտրողաց տուումարին մէջ ընտրողին անունին առջև , յիշատակելով թէ՛ կամակար եկած է քուէն ի ձեռն այս ինչ անձին (14) :

22 . Եթէ բուէի մը վրայ կասկած յայտնուի , բնիչը կը պահեն այն բուէն և Նախագահին կը ներկայացնեն , որ Ընտրողական ժողովոց մեծագոյն մասամբ կորչէ ընդունելի կամ անընդունելի լինելը :

23 . Բուէներն եկած միջոցին նոյն բուէնեբուն վրայ ներկայ ժողովուրդը իրաւունք ունի բուէտուփը ձգուելն առաջ դիտողութիւն ընել Ընտրողական ժողովոց , որ պարտաւոր է ի նրկատի աւուտ և ըստ այնմ ընդունիլ կամ մերժել նոյն բուէները պատասխանատուութիւնը իւր վրայ առնելով . իսկ բուէտուփը ձգուելն ետքը ոչ որ իրաւունք ունի բուգրելու :

ՔՈՒԷԶԱՄԱՐ

24 . Բուէհամարի օրոչեալ ժամը երբ կը հասնի , բուէարկութիւնը կը գաղթի . և Նախագահը բուէտուփը բանալն առաջ ներկայութեան տուումարին մէջ բուէարկութեան հսկող անգամոց անունները նշանակել կուտայ , նոյնպէս նաև բուէհամարի ներկայ գտնուելիք անգամոց և բնիչաց անունները : Այս բնիչը կարող են նաև հանդիսատես ժողովրդեան մէջն ընտրուիլ ի Նախագահին ըստ պիտոյն :

25 . Նախագահը կը ծանուցանէ թէ՛ բուէհամարի օրոչեալ ժամը հասած ըլլալով , բուէարկութիւնը գաղթած է : Այնուհետև բուէտուփին կնիքները քննելն յետոյ բանալ կուտայ զայն , և կը յանձնէ բուէները համարել մի աւելի ի տես ժողովրդեաց :

26 . Յետոյ կարձանագրուի ի ձեռն Ստանադարին բուէարկուաց և բուէից թիւը : Եթէ երկու թիւք անհամաձայն գան , նախագահը Ընտրողական ժողովոց հետ կը քննէ (եթէ հարկ գատի՝ առանձնանալով) և եթէ տարիմուտութեան կուտած տեսուի , իսկոյն կը հրատարակէ թէ՛ բուէարկութիւնը իբրև չեղեալ կը նկատուի , և առաջիկայ կիրակի նորէն բուէարկութիւն ընել կորոչուի ըստ 77 դ . յոդուածոց Սահմանագրութեան :

27 . Երբ բուէներուն համարները բուէարկուաց թուոյն հետ ձիւղ գայ՝ կը նշանակուի . և յետոյ մէկ կամ քանի մը գրասեղանի վրայ կը քաշուին բուէթուղթերը , նոյնպէս և զոյգ զոյգ բնիչներ ըստ թուոց գրասեղանոց , կը կըսին գրել բուէթուղթերուն պարունակութիւնը ի տես ժողովրդեան : Երբ աւարտի՝ բնիչը կատարագրեն այն թղթերը . յետոյ մէկ թղթի մը վրայ տրչիւքը կը միացնեն բուէթուղթոց հետ և կը յանձնեն Նախագահին : Բնիչը իրենց կարգացած բուէթղթերը զատ պահարանի մէջ կը դնեն , վրան կատարագրեն , և զոյգելով Գիւանին կը յանձնեն :

28 . Նախագահը կը հարցնէ թէ՛ դիտողութիւն ունեցող կա՞յ բուէհամարի գործողութեանց վրայ : Եթէ օրինաւոր դիտողութիւն մը լինի՝ բուէհամարը կրկին կատարել կուտայ միևնոյն նիստին : Իսկ եթէ օրինաւոր դիտողութիւն բնաւ չլինի՝ Ընտրողական ժողովոց տուումարին մէջ բուէհամարին արդիւնքը՝ բնիչաց տուած բուէհամարի թղթոցը համեմատ կարձանագրուի ի ձեռն Ստանադարին . որոյ ներքև կատարագրեն Նախագահ և Ընտրողական ժողովոց անգամը :

29 . Եթէ բուէն հաւասար թուով ստացուի՝ տարիքով երիցագոյնն է ընտրելի :

30 . Եթէ բայցարձակ առաւելութիւն չը գոյանայ , երկրորդ անգամ բուէարկութիւն կըլուայ : Եւ այս անգամ Ընտրողական ժողովը բուէհամարի գործողութեան մէջ յաջորդաբար առաւելագոյն երկու բուէ ստացուներէն կրկնապատիկ թուով ցանկ մը կը պատրաստէ , և ընտրողը՝ այս ցանկէն դուրս անձանց բուէ չեն կըրնար տալ :

31. Ընտրութիւնը ուսարանէն յետոյ՝ Նա-
խագահը պարտի բնորոշեաց համաթիւնն ըն-
դունիլ գրով : Եթէ հրատարակը գտնուին՝ Ընտ-
րակազմի ժողովը ի ձեռն Նախագահին համե-
մատական բաշարկութեան մէջն քուէից յա-
ջորդ առաւելութիւն շատցողները հետզհետէ կը
հրատարակ ի նոյն պաշտօն , մինչև որ ընտրելոց
թիւը լրանայ : Այս պարագան հարկ է որ յատ-
կապէս նշանակուի Քաղաքական ժողովոց զըր-
կուելիք անցեկազրին մէջ :

32. Նախագահը բաշարկին մէջ պահել
կուտայ բաշարկները , եկամ նամակները , ար-
ձանագրութիւնները և ամեն այն թղթերը՝ որ
նոյն բաշարկին կը վերաբերին , և կը կրօն
բաշարկը իւր և Թագական խորհրդոց կնքով :
Այս թղթերա կը պահուին մինչև ցվաւերացումն
ընտրելոց Ազգ . Քաղաքական ժողովին : Այ-
նուհետև արձանագրութեանց տոմարը կը պահ-
ուի Թագական խորհրդոց դիւանատան մէջ , իսկ
քուէթուղթը և նամակը կը ջնջուին :


33. Նախագահը իսկոյն պաշտօնական տե-
ղեկագրով մը բաշարկութեան արդիւնքը կը հա-
ղորդէ Ամեն . Ս . Պատրիարքին՝ նշանակելով
ընտրելոց անունը , մականունը , արհեստը , ա-
նոնց յանձնառութիւնը և բաշարկութեան բոլոր
պարագաները : Այս անդեկագրիւր կատարագրին
Նախագահը և Ընտրական ժողովոց Պիւսնը ,
և կը կրօնի Նախագահին և Թագական խորհր-
դոց կնքով :

34. Բաշարկութեան մասին Քաղաքական
ժողովը չը պիտի ընդունի այն բողոքը որ մինչև
քուէհամարի ակիրը կամ ժառ . թաղին Ընտրու-
կան ժողովոյն ներկայացուած չէ , բայց եթէ ներ-
կայացուած է հանխա . Քաղաքական ժողովը նը-
կատարութեան կտանու : Այնպէս բաշարկաւոր
մասին նկատ բողոքը կընդունի՝ ու նախ բացատ-
րութիւն կուզէ Ընտրական ժողովին : Այնու-
հետև եթէ հարկ անան՝ իր կողմէն կարգեալ
քննիչի մը ներկայութեանը կնքեալ բաշարկը
բանալ և քուէհամարի գործողութիւնը կրկին
կատարել կուտայ և արդիւնքը ճշգրէն յետոյ
հրատարակել կուտայ ի յապիրս ,

35. Վաւերացման վարչական որոշումը Նա-

խագահին համեմէն յետոյ Ընտրողական ժողովը
լուծուած կը համարուի :

36. Սոյն հրահանգէն մէ յիկ օրինակ շրջա-
նակեալ պիտի ունենան իւրաքանչիւր Թագա-
կան խորհուրդը : Իսկ ընտրական ղործողա-
թեանց ժամանակ պիտի կախուի ի անս ժողո-
վըրդեան :



Ք .

ՏԵՍՈՒՉ ԽՈՐՀՈՒՐԴ

ՆԻ ՀՈՂԱՔԱՂԱՅՈՒԹԻՒՆ

Սահմանադրութիւնն արդէն նախատեսե-
լով որ Ազգային Կեդրոնական Վարչութեան
Քաղաքական ժողովը բեռնուորո՞ծ էր տեղա-
կան , դատարան և անհատական խնդիրնե-
լով և հազիւ կարող կրլար անոնց մէջ պա-
տահած գծաութեանց պատճառները վերցնե-
լով խողապութիւնը վերահաստատելու , գաւա-
ռացոց անհամար ցուերը մտիկ ընելով թէ Ք .
Պրան և թէ Կոտակարութեանց հոյրական խը-
նամբն ու գթութիւնն անոնց վրայ հրաւիրե-
լով իրս անց և արդարութեան համեմատ խեղճ
և սղքատ դաւառացի ազգայինները գրկանք
և թշուառութենէ օլրատելու . ժողովոց և ս .
ուճորդաց , ժողովրդեան և ժողովոց մէջ պա-
տահած անհամաձայնութիւնը վերցնելով իսա-
գրալութիւն և համաձայնութիւն դոյացնելու , և
նաև Քաղաքական ժողովը միայն գործադրու-
թիւնն պոշուլ ու վճաղ մարկին մը ըլլալով՝
ազգին ընդհանուր թէ բարոյական և թէ նի-
թական յատաճաղիմութեան վերաբերեալ գոր-
ծոց համար Տեսուչ խորհուրդներ և Հոգաբար-
ձաթիւններ աահմանած էր . ուստի Քաղաքա-
կան ժողովս անվճապէս իւր ուշադրութիւնը
Տեսուչ խորհրդոց և Հոգաբարձութեանց վրայ
զարձնելով նախորդ Վարչութեան օրով սահ-
մանադրապէս կողմեալ Խորհուրդներն ու Հը-
գաբարձութիւնները վերահաստատոց , և պա-
կանները լրացոց , և Սահմանադրական տա-
րեղիտուն՝ այսինքն 1874 մայիս 1 ին կիտով
չափ նորոգեց ըստ կաննի :

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ժողովս ազգային գաստիարակութեան խըն-
դիրը զանազան նստերու մէջ նկատողութեան ա-
ռաւ և Ռուսմական խորհրդոց հետ ըստ ան-
գամ խորհրդակցելով հետևեալ կարևոր որո-
շումները տուաւ :

Ա . Պարտաւայեց այն ամեն Թագական
խորհուրդներն՝ որք տախաւին ղպրոցական հը-
գաբարձութիւն կազմած չէին , ժողովով կաղ-
մել և Ռուսմական խորհրդոց հետ յարաբե-
րութիւն հաստատել :

Բ . Նորոգեց Սահմանադրութեան գոր-
ծաղիր յանձնաժողովը՝ որ պահ մը դադարած էր
գործելէ , որոչես զի գաւառաց մէջ Սահմա-
նադրութիւնը գործադրուի և գաւառական Ռ .
ստեմական խորհուրդները կազմուին :

Գ . Կեդրոնական սնտուկի պիւսնէն մէջ
այս այժմ՝ ամսական 3000 դրուչի գումար մը
սահմանեց յանուն Ռուսմական խորհրդոց ,
որոչես զի մնայուն կերպով 2 կամ 3 ուսում-
նական ձեռնհաս պաշտօնեաներ ընտրուին և
տեսչութիւն ընեն ազգային վարժարանաց վը-
րայ և Ռուսմական խորհրդոց հրահանգին գոր-
ծադրութեանը հսկեն : Աերոյիչեալ գումարէն
1500 դրուչ Ռուսմական խորհրդոց առաջար-
կութեան համեմատ առայժմ Պոլսոց ազգային
վարժարանաց համար ընտրուած տեսչին վճա-
րել որոշեց :

Դ . Ռուսմական խորհրդոց առաջարկած
Աղաղակիցի հաստատութիւնն ալ պատեհ ժա-
մանակի մը ձգեց :

Ե . Նաև որոշեց որ Ռուսմական խորհուրդն
տշխատի սահմանել միօրինակ ուսուցման եղա-
նակ մը և զայն գործադրել առ Վարժարանաց
մէջ նախակրթարանի դրութեան վերածելով
զանոնք , ի բոց առեալ միայն այնպիսիներն՝
որք հաստատուն և զոհացուցիչ եկամուտներ
ունենալով կարող են երկրորդական վարժա-
րան ըլլալ :

Զ . Նաև առաջարկեց Ռուսմական խորհր-
դոց՝ որ վարժապետներն երեք կարգի գտան ,
և իւրաքանչիւր կարգի համար զատ անա-
կան որոշէ :

Է . Բարեգործական ընկերութեան գործաղիր
ժողովոյն առեւնապետն ըստ հրատարակուած ժողո-
վոց գաղով յայտնեց որ տախաւին նոյն ընկե-
րութիւնը գոյութիւն ունի և թէ հաւաքեալ
3350 լիբայի գումարն ապահովեալ տեղ մը կը
կենայ և անոր տոկոսը կը բանի . և եթէ նոյն
ընկերութեան Ընդհանուր ժողովոյն մէջ որ այս
օրերս պիտի գումարի , այդ գումարն իւր նպա-
տակին համեմատ գործածել որոշուի , պիտի
տառաջարկուի որ այդ գումարը յանձնուի Սա-
մաչու վանից , որ հոյսագործութեան ղպրոց
մ'ունենալու ամեն յատկութիւններն ունի .
Ը . Խօսք տուաւ նոյն Ընդհանուր ժողովոց որս-
չունը Վարչութեանս հաղորդելու :

Ը . Վարժապետանոցի մասին Վարչութիւնն
անոր կարևորութիւնն ընդունելուն հետ գոր-
ծադրութիւնն ալ որոշեց . միայն ուղեց զխա-
նալ ու ելի հաստատ կերպով թէ անոր շինու-
թեան համար Ղալաթիոց Եկեղեցին որչափ
պարտական պիտի ըլլայ և սոյդ պարտը պիտի
կարենա՞յ վճարել Ռուսմական խորհրդոց ցու-
ցած հաշուոյն համեմատ . ասոր համար յանձ-
նաժողով մը կազմեց որ Ղալաթիոց կալուս-
ծական հոգաբարձութեան և Ռուսմական խոր-
հրդոց հետ միանալով մէկ քանի հմուտ ճար-
տարապետներու հետ խորհրդակցին , և անոնց
թէ շինութեան և թէ պարտոց վճարման տե-
ղեկագրին համեմատ գործադրուի :

Թ . Մայրաքաղաքիս Թագական խորհրդոց
հասոյթը հասկնալու և իրենց ղպրոցներուն ամ-
սական տրուելիք գումարներն որոշելու համար
նաեւնաժողով մ'ալ կազմուեցաւ , որոց անդամ
որոշուեցան Քաղաքական ժողովէն մէկ քանի
անձ . Տիտեական խորհուրդէն մէկ անձ և Ռ-
ուսմական խորհրդոց գրեւոր , որ ամեն Թա-
ղական խորհրդոց աարեկան հասոյթն ստուգե-
լով և ղպրոցին այցելութիւն ընելով՝ թէ Եկե-
ղեցիէն ղպրոցին վճարուելիք ամսական գումարը
և թէ ուսմանց յարապիրն որոշեն :

Ս . Հա Ռուսմական խորհրդոց այն ամեն ա-
ռաջարկութիւններն՝ որ գործադրելի կրնային
ըլլալ : Վարչութիւնս նկատողութեան աննելով
յարմար որոշումներ տուած է ի գործադրութիւնս



4400-56

Իսկ դաստիարակութեան համար պիտանելին մէջ աւելի գումար մը սահմանելու կարելութիւնը հասկցած և այնքն զգացած է: բայց պարտաւորեալ է սպասելու թէ նոր կանոնադրութեան համեմատ ազգային ընդհանուր սուրբն ո՞րչափի պիտի կարենայ հասնիլ:

2. ՏԵՏԵՍԱԿԱՆ ԻՈՐՀՈՒՐԻ ԵԼԵԻՄՅԵՑ ԵՆ ԼԻՍԱՆՔԱՆՈՅԻ ԼՈՓԱՐԱՐՔՈՒԹԻՒՆ

Ազգային հաստատութեանց Տնտեսական և Ելևտական վիճակը կարևորագոյն և էական խնդիր մ'ըլլալով Վարչութիւնս իւր պաշտօնափարութեան սկիզբէն Տնտեսական խորհրդոյ, Ելևմտից և Հիւանդանոցի Հոգարարութեանց առաջարկութիւնները նկատողութեան առնելով անոնցմէ զործադրութիւններն կարելի և կարևոր եղածներն որոշեց, որք են՝

Ա. Ազգային կարուածոց ապահովութիւնը

Կառավարութեան կողմէն բոլոր անշարժ ստացուածներն արձանագրուելու առթիւ ազգային կողուածներն ապահովութեան տակ զընելու համար Վարչութիւնը յատուկ կարուածական մասնաժողովի մը ձեռամբ մէկ կողմէն ազգային կարուածոց կարուածագրերը Պատրիարքարան բերելով զանոնք արձանագրել տուաւ դիւանատան մէջ. և միւս կողմէն կարուածներն արձանագրող արքունի սրտոնկից ձեռօք իրենց տուածներուն մէջ ազգային կարուած ըլլալը նշանակել տուաւ, ինչպէս նաև Տէֆթիլիոսն էի տուածներուն լուանցքին մէջ: Արով ազգային կարուածները թէ Պատրիարքարանի մէջ արձանագրուեցան և թէ կառավարութեան տուածներուն մէջ արձանագրուելով՝ այլևայլ կորստեան վտանգներէ ապահովուեցան:

Բ. Գաւառաց մէջ Ազգային կարուածոց իրձանագրութիւնը

Տնտեսական խորհրդոյ առաջարկութեանը համեմատ գաւառաց մէջ ազգային կարուածոց սէնէտները գաւառացին Վարչութիւններէն արձանագրուելով անոնց օրինակը կեդրոնական Վարչութեան տուածներուն մէջ ալ արձանագրուելու որոշումն եղաւ:

Գ. Պատրիարքարանի հին պարտոց վճարումը:

Մէկ կողմէ Պատրիարքարանի հին սարսքըն՝ շատ տարիներէ ի վեր ազգին բեռ մ'են զած ըլլալով և միւս կողմէ կեդրոնական Սընտուկին հասցիմն իւր ծախարին շքաւելով յոյս չը կար սնտուկին սովորական հասցիմնն այս պարտքը վճարելու:

1871 ի Վարչութեան որոշմամբ նախորդ Պատրիարք Ս.Սեն. Խրիսեան Սրբազան ազգային հանդանակութեան դիմելով կարող եղած էր մէկ մասը վճարելու, ինչպէս որ նոյն հանդանակութեան և անով վճարուած պարտոց զօրծողութեանց արդիւնքն երկու տեղեկագրերով արդէն հրատարակուած է ժամանակին: Իսկ ներկայ Վարչութեանս օրով երկու բարերար ազգայինք՝ Բարձր. Արքայազամ փաշա Երամեան և Վսեմ. Սարգիս Աէյ Պալեան, յիշատակաց արժանի նուէր մ'ընելով Ազգն իւր հին պարտքէն բոլորովին ազատեցին: որոյ հետ նաև Վարչութիւնս կարող եղաւ Նորին Վեհափառ Կայսրութեան կամացը համաձայն Ալեքիթաշի ազգային գերեզմանատունը կարգադրելու, Ս.Սենապատիւ Սրբազան Պատրիարքին ընտրութեան Բ. Գոնէն վաւերացման ծախքը հոգալու: Պատրիարքարանը և իւր կարասիքը նորոգելու: Երամեան Բարձրաստիւ Արքայազամ փաշա 3000 ոսկի և Պալեան Վսեմաշուք Սարգիս սէյ 1500 ոսկի, ընդամենը 4500 ոսկի նուիրեցին, որոյ հաշիւը հոս կը զննեք:

ԵԼԵ

Վճարուող կեդր. Մասուկի հին պարտաւորաց	2586
Պատրիարքարանի նորօգութեան ծախաց և կարուածաց համար	445
Ս. Պատրիարքի Գահափառութեան առ. Բիւ. Դրան և ծախք զանազանք	615
Պէշիթաշի գերեզմանատան ծախաց համար	284 2/3
Ս. Պատրիարքի զործածութեան համար կառ. ք. մը իւր կազմուածքով	247
Յանձնեալ երկր. սնտուկին	386 2/3
ԸՆԴՀԱՆՈՒՄ	4500

ՍՈՐԵ

Նուէր Բարձր. Երամեան Արքայազամ	3000
Փաշայէ ԼԳ. Օսմ.	
Վսեմ. Պալեան Սարգիս	1500
Պէ. թ. ԼԳ. Օսմ.	
ԸՆԴՀԱՆՈՒՄ	4500

4500

4500

Այս ազգային բարերար երկու Վեմ' ան՝ ձիւրը շնորհակալեաց արժանի են, ինչպէս որ Ազգային ժողովը ալ իւր շնորհակալութեան քը ուէն տուաւ :

Գ. Պատրիարքական կոնդակաց համար առնուած տրոց կարգադրութիւնը :

Ելեւսոց Լոգաբարձութեան առաջարկութեանը համեմատ Պատրիարքարանէն տրուած կոնդակներուն համար առնուած տրոց բաշխումն ու հաւարումը Վարչութիւնս հարկ տեսաւ որ հետեւեալ կերպով ըլլան .

Ա. Ամեն գաւառական վիճակի առաջնորդ կամ Փոխ . Առաջնորդ կամ Պատրիարքական փոխանորդ՝ իւր ընտրութիւնն ու պաշտօնը վաւերող Պատրիարքական կոնդակի համար պարտաւոր է իւր հովուական վիճակին տարեկան մուքաթայի տրոց քանակութեան շախտով 0/10 20 դրահեկան դիւանական տուրք վճարել Կեդր . Սննդ . տուկին :

Բ. Գաւառական Ընդհանուր , Կրօնական և Քաղաքական ժողովոց ընտրութիւնը վաւերող Պատրիարքական մէն մի կոնդակի համար իւրաքանչիւր գաւառական սնտուկ պարտաւոր է վիճակին մուքաթայի տարեկան տրոց քանակութեան շախտով 0/10 10 դրահեկան դիւանական տուրք հատուցանել Կեդր . Սնտուկին :

Գ. Երկու և Կ . Պօլսոյ Թաղական Խորհուրդներն իրենց հաստատութեան կոնդակաց համար պարտաւոր են իւրաքանչիւրն թաղին եկեղեցւոյն քանչիւրի տրոց քանակութեան շախտով 0/10 10 դրահեկան տուրք , և եթէ զերծ են քանչիւրի տուրքէն՝ ըստ կարողութեան շախտով գումար մը վճարել Կեդր . Սնտուկին :

Դ. Այն Գիւանական հաստից հաւարման հոգին Ելեւսոց Լոգաբարձութեան վերաբերելով, կեդրոնական դիւանատունն իւր բոլոր ձեռքերովը պարտաւոր է վաւերացմանց կոնդակները դիւանական գործողութիւնները կատարելու համար ուղղակի յանձնել Ելեւսոց Գիւանին առանց բացառութեան :

Ե. Ելեւսոց Գիւանը նոյն կոնդակներն

առանալէ ետե սահմանեալ տուրքը կըսանձէ և տրոց որ կ'ընտրութիւն կ'յանձնէ գանձեր դիւանատուին զիտութեամբ :

Ձ . Ելեւսոց դիւանը պարտաւոր է հոգ տանել որ թէ՛ կոնդակներն առանց յաւազման իրենց տեղերը յանձնուին և թէ՛ օրինական տուրքերն անվճար չլինան , և ասոր համար պէտք է որ դիւանատունն երբ որ և է ընտրութեան տեղեկագիր համար գաւառէն կամ կեդրոնին թուղթերն , վաւերացու մը կատարուելն առաջ անմիջապէս ազդ առնէ Ելեւսոց դիւանին , որ փոյթ պիտի տանի կոնդակաց տուրքը գանձելու միջոցները սնորհներ , երբ կոնդակին տէրը Կ . Պօլսոյ մէջ է և կամ իւր գործակատարն ունի , անոր հետ բանակցելով , և երբ գաւառէն պիտի դիտուի դրամը , պաշտօնական գիր ղրկել տալով և արհանջելով :

Ե . Ազգային քննիչանուր տրոց կանոնադրութիւնը :

Մինչև հիւսոյ որչափ որ ազգային տուրքը կը հաւարուէր , բայց տակաւին անոր համար կանոն մը սահմանուած չըլլալով , Վարչութիւնս մասնագործող մը ձեռամբ կանոն մը խրով բարեց , և զայն Ազգային ժողովոյը վաւերացնել տալով , գործողութեան ենթարկել որոշեց 1875 մայիս 1 էն սկսեալ մասնաւոր հրահանգի մը համաձայն :

Ահա ասիկ ընդհանուր տրոց կանոնադրութիւնը և գործողութեան հրահանգը .

ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՐՈՑ

ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՐՈՑ

1. Ամէն ազգային անհատ որ շախտաւոր է և վաստակի ու շահուտի և իւր բնակութիւնը Պօլիս հաստատած , պարտական է կեդրոնական սնտուկին տարեկան տուրք մը տալու :
2. Ազգային տուրքն ութ աստիճանի բաժնուած է .

Ա .	300	դրոշ	որոշեալ և աւելորդն իւր թէ նուէր
Բ .	300	»	»
Գ .	200	»	»
Դ .	150	»	»
Ե .	100	»	»
Զ .	75	»	»
Է .	50	»	»
Ը .	25	»	»

3. Տրոց բաշխումը կատարելու համար ամեն Թաղական խորհուրդ իւր մէջէն և գրոն այս մասին յարմարութիւն ունեցող անձինքներէ բաղկացեալ Յանձնագործ մը կը կազմէ , որն որ կը հրահարէ նոյն Թաղին մէջ բնակութիւն հաստատող և տուրք տալու կարողութիւն ունեցող ազգայինները և հետեւին համահաճութեամբ կ'որոշէ տալու տուրքին որքանութիւնը , զորն որ պիտի հաստատէ նոյն ազգայինը իւր ստորագրութեամբ :

Յիշեալ Յանձնագործը 15 օր պայմանաձեւով կ'աւտոյ իւրաքանչիւր ազգայնացի ի Խորհրդարան ներկայանալու համար , և պայմանաժամուն իրանալէն ետքը շնորհակալողներուն իրենց աստիճանին համեմատ վճարելու տուրքին քանակութիւնը Յանձնագործը կորոշէ և մասնաւոր նամակաւ իրեն կը հաղորդէ , որ եթէ զիտողութիւն մ'ունի , 15 օրուան մէջ հազարէ Յանձնագործին , այս պայմանաժամը իրանալէն ետքը , եղած դիտողութիւնները չ'պիտի ընդունուին այն տարուան համար :

5. Տարեկան տուրքն երկու անգամով կը վճարուի , վեց ամիսն անգամ մը , ուղղին ագետ է անմիջապէս մէկ անգամէն ալ վճարել ամբողջ տարեկանը :

6. Քաղաքական գործոց մը համար Պատրիարքարան կամ Թաղական խորհուրդներուն դիմող ազգայինէ մը տարին իրացած և երեք անգամ ուղղուած բայց տակաւին անվճար ձգուած ու զիջուած տուրքերը պիտի առնուին , և ետքը նոյն անձին գործը պիտի տեսնուի :

7. Տուրքին տրուած ըլլալը պիտի հաստատուի Պատրիարքարանի սնտուկի տամարաց արձանագրութեան , և վճարողին քովը գտնուած ըն

կարողին , որ ստորագրեալ պիտի ըլլայ Կեդր . նական սնտուկին գանձագրահէն և հաւարչիէն եւ թէ հաւարչի ձեռք է առնուած , և Պատրիարքարանի կըրով վաւերացեալ :

8. Պատրիարքարանի ազգայնամարի դրամ սնտուկը պարտաւորեալ է ըստ Սահմանադրութեան ամէն տարի Թաղական խորհուրդներէն ստուգել իրենց թաղին մէջ նոր եկողները և ուրիշ վաւերներ , գայողները և ուր ելթալին , նոր շահու տէր եկողները , իրենց աստիճանին փոփոխութիւն ուղղութիւնը և վերջապէս փոխանալները և ծնունդները :

9. Տուրքը վարչութեան կողմէ ընտրեալ և վարձատրեալ յատուկ հաւարչներու ձեռք պիտի հաւարուի . իսկ երբ ուղղակի Պատրիարքարանի մէջ առնուի , որ և է ծախք տեղի պիտի չունենայ :

10. Չանազան տեղեր պանդխտող ազգայինը ընտանեօք բնակութիւն հաստատած տեղին ազգային սնտուկին կը վճարէ իւր տարեկան տուրքը :

11. Գաւառներու կողմէն կեդրոնական սնտուկին տրուելու տուրքը մինչև որ Ազգային ժողովը սահմանէ , գաւառները հինը պիտի շարունակեն վճարել :

ՀՐԱՀԱՆԳ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՐՈՑ



ԲԱՇՏՈՒՄՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՐՈՑ

10. Կեդրոնական Ընդհանուր տրոց կանոնադրութեան 3րդ յօդուածին համեմատ տրոց բաշխումը Թաղական խորհուրդ պիջնացաւ կը կատարուի :

Ամէն Թաղական խորհուրդ իւր մէջէն և դրանց այս մասին յարմարութիւն ունեցող անձինքներէ բաղկացեալ Յանձնագործ մը կը կազմէ , որոց կը նախագահէ Եկեղեցւոյն Քարուղիք և իր բացակայութեան նորո Աւագերէցը կամ Աթոռակալը :

Իւր կազմութիւնը անմիջապէս կը ծանուցանէ Կեղեցական Վարչութեան ՚ի տեղեկութիւն :

20. Սոյն Յանձնաժողովը նախ կը պատրաստէ ցուցակ մը, ուր պիտի գտնուին այն անուն Սզգայնոց անունները՝ որը չափահաս և վատապի ու չահու տէր ըլլալով իրենց բնակութիւնը նոյն թաղին մէջ հաստատած են :

Այս ցուցակը ութ սիւնակներ պիտի ունենայ .

Ա. ին մէջ պիտի գրուի տրոց մասնակցողին մականունը պարզօրէն կարգաւ ,

Բ. ին մէջ պիտի գրուի անունը

Գ. ին մէջ պիտի գրուի բնակութեան փողոցը տանը թիւը .

Դ. ին մէջ պիտի գրուի արուեստը .

Ե. ին մէջ պիտի գրուի դարձին տեղը . փողոցը և թիւը .

Զ. ին մէջ պիտի գրուի տուրքի սատինանը .

Է. ին մէջ պիտի գրուի ստորագրութիւնը

Ը. ին մէջ պիտի գրուի զիտողութիւն կամ Ծանօթութիւն եթէ կայ :

30. Յանձնաժողովը այս ցուցակը պատրաստելէն անմիջապէս ետքը տրոց մասնակցողները նամակաւ կը հրաւիրէ շարժու մէջ որոշեալ օրեր ՚ի Թաղական խորհրդարան մինչև 15 օր, հրաւիր նամակին հետ զրկելով տրոց կանոնագրութեան մէջ օրինակը :

Հրաւիրին մէջ նշանակեալ ըլլալու է որ՝ Թաղական խորհրդարանը անձամբ չ'ներկայացողն, նամակաւ իմացնելու է իւր աստինանը :

Անձամբ ներկայացողին հետ համահաստատութեան աստինանը կորոշի Յանձնաժողովը, գրել տալով իր անունն զիտացի սիւնակին մէջ աստինանը և ստորագրութեան սիւնակին մէջ ալ իւր ստորագրութիւնը : Եթէ տուրքի մասնակցող մը իր աստինանը նամակաւ իմացուցած է, և Յանձնաժողովին կողմէն նոյնին իր կարողութեան համեմատ ըլլալը ստուգուած է, ստորագրութեան տեղը « նամակաւ » բառը կը գրուի :

40. Այս առաջին հրաւիրին մինչև 15 օր անձամբ կամ նամակաւ չի պատասխանողներուն կամ նամակաւ իրենց կարողութենէն վար

աստինան նշանակողներուն երկրորդ հրաւիր մը և քննելու է դրամը, ուր նշանակուած ըլլալու է որ՝

Ա. Ընդհանուր տրոց ցանկին մէջ իրենց աստինանը որոշելու համար այս անգամ անպատճառ ներկայանալու են ՚ի Թաղական խորհրդարան :

Բ. Կամ նամակաւ իմացնելու են իրենց աստինանը .

Գ. Եթէ՝ ոչ անձամբ ներկայտնան և ոչ նամակաւ պատասխանեն, իրենց աստինանին համար պիտի նշանակուի Ընդհանուր տրոց ցանկին մէջ դրամը ըստ կանոնագրութեան :

50. Յանձնաժողովը ջանալու են այս հրաւիրագրերը մասնակցողաց ձեռքն հասցնել Ժամակցին : Աւստի նամակները ցրուողները հասցնելին տիրոջմէն կամ նամակը յանձնուած տեղէն ստորագրութիւն առնելու են :

60. Թաղական խորհուրդներն անեն տարի տրոց Թաղական Յանձնաժողովներ կ'ընտրեն և անոնց պաշտօնը յունվար 1 և մինչև տարի 1 կը տևէ ընդ ամենը 3 ամիս :

70. Այս Յանձնաժողովները իրենց թաղին վերաբերեալ տրոց ցուցակները կը սրբագրեն, նշանակելով աստինանաց փոփոխութիւնք պակասները և ուրիշ թազ գնացողները, ԲԸ նակութեան, գործի տեղեքու վերաբերեալ փոփոխութիւնք և աւելցնելով նոր եկողները և նորին տուրքի մասնակցողները :


80. Թաղին մէջ նոր բնակութիւն հաստատողները և նորին տուրքի մասնակցողները, ինչպէս նաև անոնք՝ որոց աստինանը գէպ ՚ի վեր փոխուիլ պէտք է, 3 րդ, 4 րդ և 5 րդ յօդուածներուն համեմատ ՚ի Թաղական խորհրդարան կը հրաւիրուին և ըստ այնմ կը կարգադրուի ցուցակը :

90. Անոնք որ աստինանին գէպ ՚ի վեր փոխել կուզեն, պէտք է որ իրենք ներկայանան տրոց Յանձնաժողովին և աստինանին փոխել տան :

100. Յանձնաժողովը այս սրբագրեալ ցուցակէն երկու օրինակ կը պատրաստէ . մէկը առ Թաղարական ժողովը կը գրի իր անդամոց բն

լորին ստորագրութեանը, ուր նաև պիտի գրուի նոր Թաղական խորհրդի Ատենագետին և Ատենագիրին ստորագրութիւնը և Թաղական խորհրդի կնիքն ալ, և միւրք Թաղական խորհրդարանը կը պահուի :

Այս ցուցակը առ առուեքն մինչև տարի 1 Արշային Վարչութեան որկուած ըլլալու է :



ՀԱՄԱՔԱՆԾՆ ԸՆԵՀԱՆՈՒՐ ՏՐՈՑ

110. Տնտեսական Խորհուրդը և Երևանական Հոգաբարձութիւնը միանալով Կեղեցական տրոց համար երաշխաւորեալ պաշտօնեայ մը կը առնան, որ պատասխանատու պիտի ըլլայ Ընդհանուր տրոց հաւաքմանը, և վարձք պիտի ընդունի իր ձեռքը հաւաքած դրամներուն վրայ 15 առ 100 :

120. Երևանական Հոգաբարձութիւնը Թաղական խորհուրդներէն եկած ցուցակաց համաձայն իւրաքանչիւր աստինանի թիւերը կ'որոշէ, և այս թիւերուն շափովը իւրաքանչիւր աստինանի համար ընկալագրեր կը պատրաստէ :

130. Իւրաքանչիւր ընկալագիր երկուէք բաժնուած ըլլալու է, երկու վեցամեայ վճարմանց համար . այս ընկալագրերը բուհաւոր և թուագրեալ և Երևանական Հոգաբարձութեան կողմէն կնքեալ և ստորագրեալ ըլլալու են :

140. Թաղական խորհուրդներէն եկած ցուցակներէն օրինակելով Երևանական Հոգաբարձութեան կամ Համարակալին քով ուրիշ երկու ցուցակներ գտնուելու են, մէկը մակնութեանց այրուբնից կարգաւ Թաղական խորհուրդներէն եկած ցուցակներուն ձեռքը, և միւրք իւրաքանչիւր աստինանի համար զատ զատ տեղեր բանալով, նոյնպէս այս ալ մակնութեանց այրուբնից

կարգաւ :

150. Երևանական Հոգաբարձութիւնը այս պատրաստեալ ընկալագրերէն տրոց պաշտօնէին կը յանձնէ պէտք եղածին շափ և անկէ անդորրագիր մը կ'առնէ : Նմանապէս երբ տրոց պաշտօնեայն հաւաքեալ դրամները կը յանձնէ, կընդունի համարակալէն Երևանականին կնքովը կընդեալ անդորրագիր մը, և Ժամանակ Ժամանակ կարմապի տրուած անդորրագրերուն համեմատ հաշիւը կը գոյտի :

160. Տրոց պաշտօնեայն իր կողմէն կարգեալ երաշխաւորեալ Հաւաքիչներու ձեռամբ ալ հաւաքումները կրնայ կատարել, դարձեալ իւր պատասխանատուութեան տակ :



Զ. Խրիմեան Սրբազանին հաշուական Խեցիղները :

Կախալու Պատրիարք Ամեն . Խրիմեան Սելբազան Առաջնորդութեանց վրայ առաջուց ՚ի վեր սահմանեալ մուքաթաներն իւր ձեռամբ հաւաքելուն համար կնքուած հաշիւներու ենթակայ եղած էր, որով ազգային սնտուկին պարտական կը թուար : Ահա այս մասին Երևանոց Հոգաբարձութեան առ Վարչութիւնս առած հաշիւը :

Խրիմեան Սրբազան 1869 նոյեմբեր 9 Ին Պատրիարքական աթոռը բարձրացաւ . Երևանոց Հոգաբարձութիւնը կըսէ որ այս թուականէն մինչև 1871 մայիս 1, որ 18 ամիս կընէ, 1871 Բաղադրական Ժողովոյ որոշմամբ այն աստեղծուած անտեսական խորհուրդը հաշիւը գոցած և վերջացուցած է նոյն իսկ Խրիմեան Սրբազանին հանդէպ : Ահա իւր կարգադրութեամբ 1871 մայիս 1 և մինչև 1873 հոկտեմբերի վերջն՝ որ է 30 ամսուան միջոց, Կրիմ Սրբազանութեան հանդէպ նշանակեալ կերպով կը ներկայացնէ Երևանոց Հոգաբարձութիւնը :

ՀԱՇԻԻ ԽՐԻՄԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ

1871 մայիս 1 ևն մինչև 1873 հոկտեմբերի 31:

ՊԱՐՑԵ

30 ամսուան մէջ առած	
դրամը	384230
Մշոյ Ս. Կարապետի վանուց	
անվճար մնացեալ մտքաթաները .	34600
<hr/>	
	418830

Խրիմեան Սրբազան այս հաշուոյն դէմ դիւտողութիւններ ընելով կրտէ որ նախորդ 18 ամսուան մէջ ամսական 5000 ական դուրուշ բանած է, պէտք է 10000 ականն բանիլ. վասն զի Պատրիարք մը չէ թէ 5000 դուրուշ ամսականով՝ այլ 10000 դուրուշ ամսականով ալ չը կրնոր ապրիլ: Եւսե Մշոյ Վանուց մտքաթանի պարտքերը բնաւ չընդունիր ըսելով թէ Վանքին պարտքն է այն: Գարձեալ, Պատրիարքութեան եկած ստանը Մուշէն մինչև Կ. Պոլիս 16000 դուրուշ ծախք ըրած ըլլալով՝ Կեդրոնական սնտուկէն զայն կը պահանջէ, և ուրիշ առարկութիւններ ալ ընելով ազգ. սնտուկէն պահանջ ունենայր կայսրոնէր:

Վարչութիւնս այս կիսուս հաշուոյն կարգադրութիւնն իրաւարարաց միջոցաւ թէև կը

ՊԱԼԱՆՔԷ

Ի՛ր 30 ամսականը	
10000 էն	300000
Միքայէլ ձիգմէտանին	
տուածը Կեդր. Սնտուկի	
հաշուոյն	360
<hr/>	
	300360
Մնացեալ պարտքը	148470
<hr/>	
	418830

պատրաստուէր կարգադրել. սակայն գործն աւանդաբար չընդունաւ որովհետև կարենալ զլուխ հանելու համար արժան դատոց պահ մ'ալ սպասել և պէտք եղած տեղեկութիւնները հաւաքել:

Ե. ՀԻՒՄՆԴԱՆՈՑԻ ՀՈԳԱՅՐԶՈՒԹԻՒՆԷ տեղեկագրով մը 30 հազար բաժինի վրայ ամսական 1 դուրուշ ստանելով հանգանակութիւն մը բանալ կառավարիչը, որով Հիւանդանոցի բացը գոցել կը խոստանար:

Վարչութիւնս այս առաջարկութիւնը նըկատուութեան առնելով նոյն հոգաբարձութեան տուեմապետ էֆէնտիին խորհրդակցութեամբը Հիւանդանոցի ծախուց և մտոց Պիտէն տահմանեց կեանեալ կերպով:

ԱԶԳՍՅԻՆ ՀԻՒՄՆԴԱՆՈՑԻ ԱՄՍԱԿԱՆ ՊԻՏՃԷՆ 1874 — 75 Ի ՀԱՄԱՐ

ՍՈՒՑԵ

Կալուածոց հասոյթ	7500
Պատասպարեւոց թողակը	4000
Մալիէի	3030
Պէյլիկի միս 900 հոխոյ	4500
» հաց 6000 »	12000
Նշանտուրի կէս հասոյթ	5000
Անցագրատան կէս հասոյթ	5000
Գանձանակ, եկեղեցիք, ողորմութիւն .	3500
<hr/>	
	44530
Ամսական բացը	7220
<hr/>	
	51750

ԵԼՑ

Ուսուստ 450 անձանց համար, որը 2 դուրուշն	27000
Հանդերձագին ամսական	5000
Կարասեաց համար ամսական ծախք .	4500
Գեղորկից » » »	1250
Պաշտօնէից ամսականք	10000
Կալուածական նորոգութիւնք	2000
Սյուլեայլ ծախքեր	4000
Գարոցի ծախք	4000
<hr/>	
	51750

Ս.յս 7220 դուրուշի բացը գոցելու համար Հոգաբարձութեան առաջարկած 1 դուրուշ բանի վրայ ամսական հանգանակութեան սկզբունքն ընդունեց ժողովս:

Հիւանդանոցի կալուածներէն Սէտի Գուլիի դուրուշ գումուած հիւանդանոցին կից ընդարձակ մեկ պարտէզը և անոր յարակից ինճիլիք ըսուած ընդարձակ գետինը, որոց առաջնոյն համար 500 դուրուշ և վերջնոյն համար 150 դուրուշ վաւրիլէ գասրմ տարեկան միւլքի վարձք կառնուի եղեր մինչև հիմայ, այս անգամ Հիւանդանոցի հոգաբարձութիւնը քննութեամբ և հաստատութեամբ ստուգած է որ նոյն գետինները թէ միւլք և թէ կէտիք Հիւանդանոցին սեպչականութիւնն են և տարեկան 1500 դուրուշ տուողն վարձք կը բերեն, և Հոգաբարձութիւնը յաջողէր է ինճիլիկը Հիւանդանոցին յանձնելու մինչև յառաջիկայ գոտրմ վարձակալին հետ հարկաւոր եղած սպանաններն ընելով: Իսկ պարտէզին փորձակալն ամենոյն զորութեամբ կը սլընդէ եղեր որ պարտէզին կէտիքն իրն է խորհական ալեկաի մը զորութեամբ՝ որ ամենեւին սոյն պարտէզին հետ վերադարձութիւն չունի: Ուստի Հոգաբարձութիւնը նկատելով որ յիշեալ պարտէզը ստանկայ 1250 թուականէն ի վեր տարեկան 500 դուրուշով փարձու տրուած է, մինչդեռ առ նուազն տարեկան 1500 դուրուշ վարձ կրնայ բերել, և նկատելով որ 1872 թուականին վարձակալը 127000 դուրուշ տուեր է Երկաթուղոյ ընկերութիւնէն, հարկ կուտնէ դատ բանալ յիշեալ վարձակալին դէմ:

Ժողովս այս կարևոր խնդիրը պատշաճ դատեց ներկայ հոգաբարձութեան յանձնել որ ուշադրութեան առնելով արժանը անորին է:

Ը. Զանաղան թաղական խորհուրդներէն եկած խնդրագրերուն համեմատ ազգային կալուածոց վրայ կառավարութեան կողմէն զրուած տուրքերը բաւանալու համար արժան դատուեցաւ Յանայ Պատրիարքարանին հետ խորհրդակցելով հարկ եղածը անորին է:

Յ. ՎԱՆՈՐԷՒՑ ԽՈՐՀՈՒՐԴ

Վանորկից խորհուրդը փանքերէն շատերուն հետ յարտերութիւն հաստատելով հետզհետէ գանոնք սահմանադրութեան սկզբանց համաձայն բարեկարգելու, անոնց մէջ տնօրէն խորհուրդներ կաղմկու և վարժարաններ հաստատելու Զանայ դիր եղած է. բաց տակաւին կան վանքեր որ մինչև այսօր Վարչութեան գրքին անպատասխանի թողած են:

Վարչութիւնն Վանորէից խորհրդոյ անդա-
մակցութեան հրահրեց երկազորութեան ար-
հեստին բաշտահատ Ամասեան Յակոբ ԿՔլնտին,
որ վանքերուն հողերն արդիւնաւոր փրձակի մը
մէջ դնելով գանձեր, աղգային հաստատութեան
աղբիւրներ ըլլան, որոց հաստատ եկամուտովն
աղգային հանրական պիտոյքները հոգացուին և
բարգաւաճին :

Աղգային Վանքերուն վրայ լաւ և ճիշդ գա-
ղափար մը ունենալու համար Վանորէից խորհր-
դոյ առ Վարչութիւնն ընելիք ստարեկան համա-
րատութիւնն Աղգային Ժողովոյդ աշտար-
թեանը կը յանձնուի :

4. ԴՍՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ ԵՒ
ԿՏԱԿԱՑ ՀՈԳԱՐԱՐՉՈՒԹԻՒՆ

Դատաստանական Խորհրդոյ և Կտակաց Հս-
գարսթութեան խնդիրները Խառն Ժողովոյ վե-
րաբերելով առ այն մատուցած համարատու-
թիւններն Աղգային Ժողովոյդ պիտի մատուց-
ուի Խառն Ժողովոյ համարատուութեան հետ :

Պ .

ԳԱՒԱՐՅԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Գաւառացոց խնդիրներն որ Աղգային Վար-
չութեան ամենամեծ գրողուներն են, զվտու-
րարար հետեւեալներէն կը բաղկանան .

1. Հոգային խնդիրներ

Բարեխնամ կառավարութիւնը գաւառացի
հոգաբարձները բաշտակերտ և երկազորութիւնը
գաւառներուն մէջ բարգաւաճելու համար գանձեր
հազի և գեանի աէր ընելու օրէնք մը հաստա-
տած է, որով փոքր գումարներ վճարելով իրենց
փարուցան ըլլած գեանին իրենց վրայ բախտ
կրնեն, սոսիքն՝ նոյն գեանին տէրը կըլլան :

Մեր գաւառացի աղգայինք կամ այս օրէն-
քը ժամանակին լաւ չեն ըմբռնած, կամ կա-
ռավարութեան անձինքը աէրութեան այս օրէն-
քն արգարութեամբ չեն գործադրած, փան

զի այսօր մէկ բանի գլխաւոր գաւառներու մէջ,
ուր բարեխնամ հոգ կը գանձին, հոգերը տեղոյն
բերտ պէյերուն անոցաճ են րախոյի օրէնքով
կամ կը բռնանան որ իրենց վրայ անցունեն հա-
կառակ բարեխնամ կառավարութեան հրամայած
սկզբանը :

Մեր գաւառացի ժողովրդոց շատ անգամ
խողմութեամբ Պատրիարքարանը շեցուին և
Պատրիարքն ա ժողովները դատելոյն, զրեթէ
լոկ այս հոգային խնդրոցն համար է : Այդ բեռ-
նաւոր պէյերը կամ երկրացի աշխատող ժող-
ովրդէն գաղտուկ անոնց հողերն իրենց վրայ րա-
փաւ ընել տուած են, որ կառավարութեան օրի-
նաց հակառակ է, փան զի աշխատող ժողովրդ-
եան կը պատկանին այն հողերը, և կամ գանձ-
զան հնարքներ բանեցնելով ժողովրդեան հողերը
ձեռքերնուն առած և առնելու ետեւ են, և շատ
չնչին վարձ վճարելով նոյն հողերուն վրայ կը
բանեցնեն ոյն աղքատ աշխատողները, որ կա-
ռավարութեան հրամայած օրինաց համաձայն յիշ-
եալ հողերուն աէրն էին :

Այս հոգային խնդիրը գաւառացոց ամե-
նակարեւոր խնդիրն է, և իրենց ապագայ յառա-
ջագիտութեան և հարստութեան հիմը կը հա-
մարուի, այս նկատմամբ վարչութիւնն չէր կըր-
նար անտարբեր մնալ ստոր վրայ, ուստի գա-
ւառացոց այս անտակ խնդիրներն 'ի մի ամիս-
փելով րագրիտ մը զրեց, և Սրբազան Պատ-
րիարքն այս րագրիթն գործադրութիւնը ձեռք
բերելու համար ամեն ջանք 'ի գործ դրաւ :

2. Զորարամնի [առիկո պէտէլի] տրոց
Վերաբերեալ խնդիրներ

Մէկ բանի գաւառաց ժողովրդը այս տուր-
քի համար բողբելով կրան թէ կառավարու-
թիւնը պետէլիկ տուրքին մէկ չորրորդը բաշ-
խած է ժողովրդեան, և փոխանակ բաշխուի
հրամանի թուականն գործադրել սկսելու հինգ
տարի ետքն եզամ թուականն կողեն գործադ-
րել : Այս և ասոր վերաբերեալ ամեն խնդրոց
համար Վարչութիւնն րագրիտ գրեց առ Բ . Դու-

առն, որպէս զի գաւառացոց վրոց ծանրացած
այս տուրքի հաւարածն եզամ հրամանաց համե-
մատ արգարութեամբ գործադրուի :

3. Գաղափոյ և ուրիշ տեղերու սովնալ
Աղգայնոց օգնութեան խնդիրը

Գաղափոյ ատանձնորդին և երեւելոց րա-
տարագրութեամբ խնդրազիր մը գտնով կը
յոցանեն թէ Գաղափոյ մէջ տիրած սովին և
տրմուեաց սղութեան պատճառաւ 150 տուն
Հոց ժողովրդեան մեծ մասն անձթութեան վը-
տանգի մէջ ինկած է : Այս խնդրագրոյն փրայ
Վարչութիւնը մասնաժողով մը կազմեց, որոց
անդամ եղան նաև տեղացիներն երկու անձ
որ ի նպատ Գաղափոյ սովեալ աղգայնոց հան-
գանակութիւն մը լոցին և հետզհետէ բարերոր
անձինքներն ընդունած օգնութիւնին սովեալ
աղգայնոց զրկեցին : Նոյն միջոցին նաև կառա-
վարութեան տուրք վճարելու մասին նեղութիւն
կրեւին կը յայտնէին, որոց հետեւ Գաղափոյ
կուսակալին գրուեցաւ որ իւր հոյրական իւր-
նամբն աղքատ ժողովրդեան վրայ տարածելով
տրոց սրահանջման մասին նեղութիւն չը տրուի,
նաև իրենց օգնութիւնն ըլլայ :

Սովն սկսաւ րանի մը գաւառներ ևս տա-
րածուի . Կողգատ և և Կեսարիա սովա շըր-
ջանակին մէջ մտան, հետզհետէ ցաւալի և
խղճուի լուրեր հասան հոս . յիշեալ մասնաժո-
ղովն սակի մեծցաւ, որոց անխանջ և անձնը-
ւեր աշխատութեամբը բարերար անձինքներէ
հանդանակեալ գումարները սովելոց կը բաժ-
նուէր արգար և իմաստուն կարգադրութեամբ
մը . նաև Բ . Գաւառ կառավարութեան կողմն
կազմուած յանձնաժողովն ալ կը տրուէր, որ-
պէս զի սովեալը կառավարութեան կողմն
բաշխելի օգնութեանն ևս չը գրկուին : Սրբա-
զան Պատրիարքը դարձեալ կուսակալներուն
յանձնարարականներ զրեց անոնց շնորհը խնդ-
րելով սովն նեղեալ խղճուեաց համար . նոյն
պէս րագրիտ գրեց առ Բ . Գաւառ, նախապա-
րայ զթութիւնը և անոնց մարդատիրութիւնը
հոյցելու համար :

Յիշուի սովելոց օգնութեան Մասնաժողո-

վը շնորհակալութեան արժանի ջանատիրութեամբ
աշխատած է մինչև այսօր, և տակաւին իւր
այս զովելի աշխատութիւնը կը շարունակէ :

4. Մոյ Կաշ աղբիտ գիւղի աղքատաց համար
կրած հանգանակութեան խնդիրը

Ամենապատիւ Խրիսեան Սրբազանի պատ-
րիարքութեան սխիշմունցն Աւաղ - Աղբիւրի-
տեւեալիցաւ մերի և բոկոսն աղքատաց հա-
մար Ամուսիկոյ Հոցիական ընկերութեան մի-
ջոցաւ բացուած հանգանակութեանն 10 հազար
գարուչի շաւի գումար մը գոյացած և անսխիշ-
պէս Խրիսեան սրբազանին յանձնուած էր : Խը-
րիսեան սրբազանին Պատրիարքութեանէ հրամա-
րէն ետև Աւաղ - Աղբիւրից յիշեալ գումարին
դեա իրենց չհասած ըլլալը յոցանելով և հա-
ւատարիմ փոխանորդ մը յոց սաւալ կը խընդ-
րէին որ անոր յանձնուի : Ասոր վրայ Վար-
չութիւնն Խրիսեան Սրբազանն գրաւոր տե-
ղեկութիւն պահանջելով և ստանալով վերահա-
սու եզաւ որ Ն . Սրբազանութիւնը յիշեալ գա-
մարին փոխադէն գրեթե պրկած է Մշոյ Ս . Կա-
րապետի վանքը սա նպատակաւ որ անոնք
ճախտելով գոյացած գրամը մշանջեմապէս նոյն
վանքը մնայ իբրև մայր գրամ և վանքը պար-
տական ըլլայ տարակ տարի հազարական զուրաշ
վճարել Աւաղ - Աղբիւրի վարձարանին տարե-
կան ճախտաց համար : Խրիսեան սրբազանին այս
կարգադրութիւնը Վարչութիւնն ընդունելով
հրահանգ զրկեց Մշոյ Ս . Կարապետի վանա-
հօր, որպէս զի բաւ ոյնմ հարկ եզամք անօրի-
նէ և գործազրէ :

5. Կիլիկիոյ Սրբազան Կարապետի
խնդիրները

Ա . Կիլիկիոյ Սրբազան Կաթուղիկոսին
խնդրոցն համեմատ Անտիոքաց գեանաշարժէն
փառելոց համար եզամ ժողովարարութեան հա-
չին առաւ Վարչութիւնն Տեղաւանակերացի Կա-
րապետ վարդապետէն, որ կըսէր թէ 100 ին
20 աշխատութեան վարձը իրատուցելը են տե-
ղայիք և հետն աշխարհական մ'ալ ընկեր դը-
րելը են, և Կաթուղիկոսի կողմն ալ վաւերա-

յետև ժողովրդական տաճար մը, որով քանի մը գաւառներ պարտելով օգնութիւն հաւաքեր է ընդ ամենը 9703 զարուշ, ուրիշ 5670 զըզ զրկեր է իւր տեղն, և մնացեալ 4033 զըզէն 2193 1/2 զըզ թէ իրեն և թէ ընկերաջը ճամբու ծախք եղեր է. և 1839 1/2 զըզն ալ կաւապետ վարդապետ թէ իրեն վարձք և թէ հանդերձագին և Պօլսոյ մէջ 2 ամսուան ծախուց համար վար զրեր է:

Ժողովս ժողովրդական տաճարը կարապետ վարդապետն առնելով զիւրաւորան յանձնեց և հարկ դատեց Արիւիկոյ Սրբազան կաթողիկոսին հարկողել սոյն համարատու թեան տեղեկութիւնը:

Բ. Կիլիկոյ Ս. կաթողիկոսը քանի մը կղերական և կաթողիկոսութեան վերաբերեալ խնդիրներ կընէր, որ Ժողովս Սրբազան Նախագահին յանձնարարեց Ն. Սրբազնութեան պատասխանել:

Գ. Սրբազան կաթողիկոսը նամակաւ կը յայտնէր որ Կիլիկոյ Ս. Աթոսոյն սեպհակաւոսութիւնն եղած Փայասի կողմերը թարաւնչու ըսուած ձիթատանին հրովարտողը կորսուած է, և նոյն տեղն ազգին շատ օգտակար ըլլալուն համար կը խնդրէր որ արձանագրութենէն հրովարտակին օրինակն առնուելով՝ րախա ընելու համար հարկ եղածը տնօրինուի:

Ժողովս Սրբազան Պատրիարքին միջոցաւ բանակցեցաւ այս մասին Ատանայի կուսակալութեան հետ, և նոյն կուսակալութենէն եկած պատասխանին համեմատ արքունի Տէֆթէրխանէին գրուեցաւ որ յիշեալ կալուածը մասշիւլէտպատ մնալու համար հարկ եղածն ի գործ դրուի: Տէֆթէրխանէն եկած պատասխանը կը ծանուցանէր որ Սոսի վանքին կալուածն ըլլան ամենին արձագրուած չէ, և հարկ է փոխարինութիւն մ'ընել վանքին վրայ արձանագրելու և անոր սեպհակաւոսութիւնն ընելու համար Սոյն տեղեկութիւնը հարկուեցաւ Արիւիկոյ Ս. կաթողիկոսին և խնդրուեցաւ որ իւր կողմէն մէկը սոյն տայ հոս, որոյ հետ բանակցելով առաջարկուած փոխարինութեան մասին հարկ եղածը տնօրինուի:

Դ. Կիլիկոյ Սրբազան կաթողիկոսին հրովարտականին վերաբերեալ խնդիրն ու անոր կարգադրութիւնը Խառն ժողովոյ համարատուութեան մէջ պիտի տեսնուի:

Ե. Զանազան խնդիրներ

Յիշեալ գաւառական խնդիրներէն զատ եկած են նաև շատ մը ուրիշ խնդիրներ, որք կամ առաջնորդի իշխման գտնադատ, կամ առաջնորդի փոփոխութեան պահանջում են, կամ կրօնախօսութեան կը վերաբերին և կամ եկեղեցւոյ շինութեան հրովարտակի խնդիր են: Ժողովս այս խնդիրներն ալ նկատողութեան առնելով պէտք եղած կարգադրութիւններն ըրած և րագրիրներ զրած է:



Գ.

ՆՐՈՒՍԱՂԵՄԱՅ Ս. ՊԱՏՐԻԱՐԷԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Բեթլեհէմի եկեղեցւոյ սինազարդ գաւթին և Խաթունբու բաժանման խնդրոյ վրայք Նրուսաղեմոյ Ս. Պատրիարքէն սպասուած տեղեկութիւններն Նրուսաղեմոյ Պոխանորդ Հօր կողմէն հաղորդուեցան Ժողովոյս հետեւեալ երկու նամակներով:

Ա.

Ամեն . Տեղապահ Սրբազան Հայր Նախագահ Աղբ . Վարչութեան

Ասիէ առաջ Խաթունբու բաժանման վերաբերեալ մեր տեղեկութիւնները Պատկառելի Վարչութեանը հաղորդելով, խոստացած էինք Նրուսաղեմի Ս. Պատրիարքին կողմանէ առելի հիմնական տեղեկութիւն բերել Քիչ օրէն:

Ահաւորի Ն. Սրբազնութիւնը կը ծանուցանէ թէ Խաթունբու թէ Սուրբ Տեղեաց և թէ Պերեգիմանաւան մէջ բնաւ իրաւունք չունին և ոչ իսկ որ և է հրովարտակ կամ կողուածագիր ունին այս մասին, և թէ գերեզմա-

նատան և թէ Ս. տեղեաց մէջ հիւրասիրութեամբ ընդունուած են միայն մեր հարատակն ըլլանուն համար:

Կը ծանուցանէ նաև թէ այս խնդիրը թեւորդն յոյնք են, կարծելով որ զմեզ այս խնդրոյն դառնեցնելով Բեթլեհէմի խնդիրը մուսուլման պիտի յաջողին: Եւ կը խնդրէ որ այս մասին Վարչութեան կողմանէ Բ. Գրան առըտեղիք սրատասխանը քիչ մը երկարաձգուի, որպէս զի միջոց ըլլոյ նոյն առաւել կարեոր Բեթլեհէմի խնդիրը վերջացնելու և ապա Խաթունբու խնդիրն, որուն համար Ն. Սրբազնութիւնը կը բանակցի այս օրերս Խաթունբու կախիւ պիտի հետ. թերևս յաջողի ալ խաղաղութեամբ վերջացնել առանց Վարչութիւնը ծանծրայնելու:

[Ստորագրութիւն]
1774 Մարտ 21 ԽՈՐԷՆ ՎԱՐՉԱՊԵՏ Փոխանորդ Երուսաղեմի

Բ.

Ամենապատիւ Սրբազան Հայր Նախագահ Աղբ . Վարչութեան

Ազգային Վարչութիւնը իւր մէկ որոշումն հաղորդեց ինձ Եսայի Ս. Պատրիարքին հաղորդելու համար. այն է, նախ Բեթլեհէմի սինազարդ եկեղեցւոյ խնդրոյն համար լիազօր փոխանորդ մը կարգել. երկրորդ՝ յիշեալ խնդրոյն քովսիսին համար երկու անգամ որոշել:

Այս անգամ ի պատասխանի պատկառելի Վարչութեանը որոշման կը յայտնէ Ն. Սրբազնութիւնը թէ Վարչութեան թագրիրն ուրիշ հրամանագրի մը հետ Բ. Գրան ուղղած է տեղոյն միւթէսարրֆին և Հայոց քովսիսի պահանջելու մասին բացատրութիւն կուզի:

Այնպէս կը տեղեկանամք կըսէ Պատրիարք թէ Նրուսաղեմի միւթէսարրֆի պատասխանած է Բ. Գրան թէ Բեթլեհէմի խնդիրն արդէն Նրուսաղեմի խաղաղ մեծիտի մէջ կը քննուի և Ժողովոյն վերջին որոշումն առնելէն վերջ կըրնամ պատասխանել:

Նաև կը յաւերտ թէ արդէն սոյն խնդրոյն

վերաբերեալ բոլոր հաստատագիր, հրովարտակ և այլ թղթերն պահանջած առած են թէ մեր կողմէն և թէ Յունաց:

Նաև կը յայտնէ թէ արդէն Զատիկ վրայ հասաւ, ոչ մենք, ոչ յոյնք և ոչ տանկներ ծամանակ ունին սոյն գործին նայելու. Զատիկէն զինի ժողովի քննութեան արդիւնքն ևս տեսնալով յետ այնորի տնօրինութիւն մը կընենք և կը յուսուիք որ այս միւթէսարրֆի փոխակու միջոցները խորհելէ ետ շը մնար պատկառելի Վարչութիւնն:

Ահա այս է Նրուսաղեմի Ս. Պատրիարքին պատասխանը, զոր վեճմ Ժողովոյք ուղարկութեան կը մատուցանեմ:

1874 Մարտ 2 [Ստորագրութիւն] ԽՈՐԷՆ ՎԱՐՉԱՊԵՏ Փոխանորդ Երուսաղեմի

Նրուսաղեմոյ Պոխանորդ Հօր խնդրանոց համեմատ Ժողովս որոշեց որ Նրուսաղեմոյ վերաբերեալ ամեն րագրիրներուն և անոնց սրատասխաններուն օրինակները արտաքին իրեն Նրուսաղեմի կողմէն համար, որպէս զի ի նպատակ Նրուսաղեմոյ խնդրոյ Վարչութեան կատարած գործողութեանց վերահասու ըլլալով միտքաւորութիւնն արձանագրութիւն Նրուսաղեմոյ զիւրանին մէջ յօդուտ սպաղային:

Կեզրնական անուակին Նրուսաղեմոյ աթոռն ունեցած հին տարիներու մնացորդ 2 բեռ սոյքան հազար զարաչի պահանջքին համար Վարչութեան կողմէն քանկցո գրիւած նամակաց պատասխանն ուր ուրեմն Նրուսաղեմոյ Ս. Պատրիարքը զրկած ըլլալով, այս պատասխանին իմաստն Ժողովս հասկցաւ որ Նրուսաղեմոյ Ս. Պատրիարքը սոյն զրամական խնդրոյն ըստման ապագային կը վերապահէ, և աթոռին ներկայ զրամական անձուկ վիճակն ու նեղութիւնները կը բացատրէ 1860 կն մինչև 1872 վանքին ստաներիւտ տարուան երկուսական հաշիւները ստորագրեալ գրկելով: Այս խնդրոյն վրայ տակաւին ինչ ինչ պատճառաւ Վարչութեան կողմ վերջնական որոշում մի արուած չէ:

Եւրոպայի մէջ Երուսաղեմայ աթոռին ունեցած ազարակաց տեղերուն յաջաւորութեան համար բազրիր գրուեցաւ :

Էրուսաղեմէն եկած մէկ հեռագրին վրայ Ս . Պատրիարքին Արտաքին գործաց Բարձր . պաշտօնէին հեռագիր մը բաշել տուաւ առ կառավարիչն Երուսաղեմայ հեռուաւ խմատով .

«Բեթլեհէմի եկեղեցոյն մէջ առաջուց ի վեր եղած սովորութեան համեմատ Հայերը աւարին մէկ անգամ աւելու առեկեկն Յուսայ կողմանէ արգելք պատահեցա՞ւ այս արգելքին բարձուը խնդրուած ըլլալուն համար , զմինչև հիմայ Հայերն սր տեղուանքն որ առաջուց ի վեր աւելու սովորութիւն ունին առ « ոսնց արգելքի զոյն գործադրել տրուի » :

Երուսաղեմայ միախմորդ հայրը խնդրեց որ Ս . Փրկչոց վանոց նորոգութիւնը շարունակելու հրաման առնուի . վասն զի կըսեր , եղած վէճին քննութիւնն աւարտած և իրաւունքը մերն ըլլալը հաստատուած է սրաշտօնական տեղեկագրերով :

Ս . յս մասին բազրիր գրուեցաւ :

Ե .

ԱՍՏՈՐՈՅ ԽՆԳԻՐՆԵՐ

Ա . Դամասկոսի և Մուսուլի մէջ Ասորոց եկեղեցիներն ու վանքերը ժամանակաւ կրեցան բաժնուող և կաթողիկե կողմ Ասորոց մէջ բաժնէր է կառավարութիւնը և բանի մը եկեղեցեաց մէջն ալ պատ բաշելով կիսեր և երկու կողման յատկացուցեր է : Ս . յս գործին դէմ կը բողոքէ Ասորոց Պատրիարքը և անօրէնութիւն կը խնդրէ :

Ժողովս զիտելով որ նախորդ Վարչութեան օրով այս խնդրոյն համար մատուցուած վերջին բազրիրն անպատասխանի մնացած է , վերասին բազրիր գրել որոշեց : Սայն թագրերը Բ . Դատը գրիւեղէն ետև : Գաբաբեհասի է Ֆէնտին Տիմանր գաղթիկ տեղեկագրիկ պատահելը

բերելով , որոշուեցաւ զայն պաշտօնական գրով մը հաղորդել Ասորոց պատրիարքին զխտորութիւն եթէ ունի խնդրելու համար :

Բ . Ստրեստանի կուսակալութեան Հոմա ըտուած գաւառին մէջ գտնուած Ֆէրթէքա և Քարայի անուն գիւղերուն վէճի տակ եղած հուղերն տակէ առաջ Պատրիարքարանի թագրերովը կառավարութիւնը բաժնելով , Ֆէրթէքայի հողերը կաթողիկե ասորոց և Քարայի հողերն ալ բուն Ասորոց տրուելու որոշում ըրեր է . բայց այս որոշման հրամանագրին անգործադրելի մնացած լինելուն նոր անօրէնութիւն կը խնդրէ ասորոց Պատրիարքը :

Յիշեալ հրամանագրին գործադրութեան համար ալ բազրիր գրուեցաւ :

Գ . Եկեղեցոց մը շինութեան համար կառավարութեան իր նպատ առնուած 75 վրասնի գումար մը ասորի Եմաուն վարդապետին քովէ էր , և այն ալ հիմայ Տիգրանակերտ գաւառուով Ասորոց Պատրիարքը կը խնդրէ որ նոյն գումարը յիշեալ վարդապետէն առնուի և իրեն յանձնուի : Ժողովոյս որոշմամբ այս խնդիրը Տիգրանակերտի Առաջնորդական տեղապահ Ըստեփան վարդապետին յանձնարարուեցաւ : Ըստեփան վարդապետ կը տեղեկագրէ որ Եմաուն վարդապետ կանչուելով նոյն գումարը պահանջուած ատեն պատասխաններ է թէ ինքը կառավարութեան 7500 դրերուչ առած է , երկու տարիէն աւելի Պոլիս մնացած է Ասորոց նախորդ հանգուցեալ Պատրիարքին օրով , և այդ ստակին մէկ մասը ծախս բրած է , և 62 ոսկի Պոլիս Ասորոց սցծման պատրիարքին ծանօթ տեղ մը պատրաստ է եղեր , ինքը հոն նայն Պատրիարքին գործախատարն կրուխաւոր ցուցած է , և թէ այդ ստակը կրնայ դանձուիլ անմիջապէս երաշխաւորին միջոցաւ , և կը յաւեր որ Եմաուն վարդապետ բարեբարոյ անձ մ'է և թէ ասորոց պատրիարքը զայն բանադրած և եկեղեցի մտնալու արգիլած է , Պատրիարքին հետ հուշատուելու միջնորդութիւն կընէ : Ժողովոս այն տեղեկութիւնները Ասորոց Պատրիարքին հաղորդել որոշեց :

2 .

ՏԵՂԱԿԱՆ ԽՆԳԻՐՆԵՐ

1 . Ժողովրդական հանրագրութիւնք

1873 հոկտեմբեր 17 թուականաւ տպագրուելու նոյն օրինակ բանի մը հանրագրութիւններ եօթն պատգամաւորոց ձեռօք ներկայացուելով , Ժողովս զիտեց որ անոնց մէջ պարունակեալներէն Խրիմեան Սրբաղանին և նախորդ Քաղաքական Ժողովին հրաժարմանց կէտերն արդէն կատարուած իրողութիւններ են , և մնացեալ կէտերն ալ Ազգային Ժողովոյ անօրէնութեանը կը պատկանին : Ուստի նոյն հանրագրութիւնները՝ զանոնք ներկայացնող պատգամաւորոց դարձնելով յայտարարեց որ ելք լուծեալ և կատարուած իրողութիւնները դուքս հանելով մնացած խնդրոց համար զատ հանրագրութիւն մը ներկայացուի , այն ատեն Ժողովս ընդունելով զայն Ազգային Ժողովոյ անօրէնութեանը կրնայ յանձնել , վասն զի նոյնպիսի խնդրոց վերայ անօրէնութիւն ընել իւր ձեռնհասութեանէն վեր է :

2 . Եր թաղական խորհրդոց ընտրութիւնք

Թաղական խորհուրդներէն մէկ քանիին հրաժարման վրայ անոնց տեղ նորեր ընտրուելով , վաւերացման կոնդակները տրուեցան , ինչպէս են Գումգարույի Մայր եկեղեցոց համար :

- Եկնի Գարույի
- Գուզկուճուլի
- Քարակիճուրիկի
- Պոյաճի Գիւլի
- Թորգարույի
- Գատըմ Փաշայի
- Էյիսի
- Պէշիթաշի

Խաազիւղի Թաղական խորհրդոյ մասնակի ընտրութեան համար :

Առնոյմէ զատ նաև Գատը Գիւլի և Գումգարույի զբոյ Թաղական խորհուրդներն ալ հրաժարելով անոնց տեղ անժամանակեայ Թաղական խորհուրդներ զբուեցան :

3 . Գատը Գիւլի Թաղական խորհրդ

Նախորդ Քաղաքական Ժողովին օրով Գատը Գիւլի Թաղական խորհրդոյ անդամոց մէջ անհամաձայնութիւն ծագելով վէճի տակ կը գտնուէր նոյն խորհուրդը : Վարչութիւնս փորձ մը ընելէն ետքը բոլորովին լուծեց նոյն թաղական խորհուրդը և անոր տեղ անժամանակեայ Թաղական խորհուրդ մը հաստատեց : Սոյն անժամանակեայ խորհուրդը նախորդ խորհրդոյ օրով նորոգ կառուցեալ թաղին երկսեռ վարժարանոց շինութեան հաշիւն առաւ , պարտքերը վճարեց , դպրոցներուն պակասը լրացուց և դպրոցական կարասիները պատրաստելով զբոլորոցները բացաւ :

Գատը Գիւլի Թաղական խորհրդարանին մտտուկը պահուած շրմէնարձեղներու թղթերը , որ ընկերութեան մը կը վերադարձուի և աւանդ պահուած էր հոն , անժամանակեայ Թաղական խորհրդոյն վրայութեանը վրայ նոյն ընկերութեան յանձնել որոշուեցաւ :

4 . Զանազան տեղական խնդիրներ

Վերայիշեալ տեղական խնդիրներէն զատ 20 էն աւելի ուրիշ տեղական խնդրոց կարգադրութիւնն եղած է Ժողովոյս ներկոց շրջանին մէջ , որք հանրական կարևորութիւն չունենալով մանրամասնարար նշանակել հարկ չդատիր :

Ե .

ԱՆՆԱՏԱԿԱՆ ԽՆԳԻՐՆԵՐ

Ժողովս իր պաշտօնավարութեան առաջին տարուան շրջանի միջոցին 28 անհատական խնդիրներով չգրառած է , որոց ամենն ալ լուծում զտած են , սակայն հարկ չը տեսնէր անոնց մանրամասնութիւնը նշանակելով ստուարացնել ներկոց համարատուութիւնը :

Ը.

ՅԱՐԱՐԱՏՈՒԹԻՒՆ ԷԶՄԻՍՏՆԱՅ ՎԵՆՓՔԻ ԶՅՐԱՊԵՏՐՆ ԷՆՑ

Վեհափառ կաթողիկոսը կոնդակաւ կըծաւ նուցանէր Ալեքիանիս ժառանգաւորաց նոր վարձարան մը շինած ըլլալն , և 2 աղբաւ աշխատակերտ կուգէր ճրիտարար գոտախարակերտ համար : Ժողովս Ռուսմեական խորհրդոյ յանձնեց նոյն աշակերտաց ընտրութիւնը :

Փ.

ՎԵՐՁԱՐԱՆ

Ժողովս հարկ չը տեսաւ իւր պաշտօնավարութեան ներկայ շրջանին մէջ տեսած բոլոր խընդրոց լուծուելու մանրամասնարար նշանակել , այլ միայն այն խնդրոց լուծուելու նշանակեց , որք կըրնային կարելոր ըլլալ Ազգային ժողովոյդ 'ի գիտութիւն : Իսկ մնացած խնդիրներն՝ որք անհատական և մասնաւոր ըլլալով հանրական կարեւորութիւն ունենալէ հետո՛ր են , դանց ըրաւ մի առ մի նշանակել համարատուութեանս մէջ :

Վարչական ժողովներն գրադեցնող խնդիրները գլխաւորաբար երկուք են . մէկ մը՝ գրամական խնդիրն , որ Ազգային ժողովոյդ տրոց համար սահմանած նոր կանոնադրութեամբ կը յուսացուի որ կարգի մտնէ , և որու միջոցաւ շատ մը խնդիրներու կարգադրութիւնը պիտի գլխաւորուի : Մէկ մ'ալ գաւառական խնդիրն է ըլլն , որոց համար Ժողովս Սրբազան Նախագահին հետ ասկէն կարելի եղած միջոցները ձեռք առած է հիմնադէս կարգադրել : Այս երկու կենսական խնդիրները նորատաւոր կերպով կարգի մտնելէն ետքը մնացեալներն օրուան խնդիրներ են , որոց լուծուելու գծաւորութիւն մը չունի կամ գրամով ըմնալիք խնդիրներ են , և բարբաժին գրամական խնդրոցն լուծուելէն կախումն ունին :

Քեղաւք Քաղաքական Ժողովոյ

Ս. Ե. ՄԱ. ԲՍՈՒՏԵԱՆ	Փոխ Ս. Ե. ՄԱ. ԲՍՈՒՏԵԱՆ
Ս. Ե. ՄԱ. ՄԻԿՈՆԵԱՆ	Փոխ Ս. Ե. ՄԱ. ՄԻԿՈՆԵԱՆ
Խ. Յ. ԱԼԵԱՆԱԳԵԱՆ	Ս. ԱՐԱՊԵԱՆ
Ա. ԻԿԻՏՊԱՇԸԵԱՆ	Յ. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ
Ս. Խ. ՓԱՓԱՋԵԱՆ	

ՀԱՄԱՐԱՏՈՒԹԻՒՆ

Կ Ե Գ Ր Ո Ն Կ Կ Ա Ն Վ Ա Ր Զ Ո Ւ Թ Ե Ա Ն

ԲԱՂԱՔԱՆԱՆ ԺՈՂՈՎՈՑ

1875 — 76 ՍՄԻ

Ա. Խ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՆ

Ս.

ՆԱԽԲԱՆ

Քաղաքական Ժողովս՝ իւր պաշտօնավարութեան 74 - 75 ամի շրջանն աւարտելէն ետե , իւր միտնեց համարատուութեան տեղեկաւորը պատրաստելու ասիլս որոշեց Ազգային ժողովի յայտարարել թէ Քաղ . Ժողովս իւր պաշտօնավարութեան շրջանը 1875 Մայիս 1 ին ըլլալոցս կհամարի և կհնդրէ Ազգային Ժողովն՝ իւր յաջորդին ընտրութիւնը փութայնել , որպէս զի Վարչական գործերն անաւս չմնան : Աս այս Ազգային Ժողովը իւր Մայր Գիւտնին միջոցաւ պատասխանելով թէ Ազգ . Ժողովս Քաղ . Ժողովոյ պայմանաւոր լրացած չհամարի և հրաժարականը չընդունիր , կը հրահրէր զՔաղ . Ժողովս իւր պաշտօնը շարունակել մինչև 1876 Մայիս 1 :

Հետեւոյնս՝ Քաղ . Ժողովս Ազգային ժողովոյդ այս հրահրին ընդունելով և իւր գիտանք նորոգելով՝ մինչև ցորոշուլ պայմանաւոր իւր պաշտօնը շարունակեց , և այսօր 1876 մայիս 1 իւր պայմանաւոր լրացած տեսնելով ըստ օրինի իւր հրաժարականը և միանգամայն աւաճին

միտնեց համարատուութեան կցելով նաև այն երկրորդ և վերջին տարեկան համարատուութիւնը կրնաուցանէ Ազգային ժողովոյդ :

Բ.

ՏԵՍՈՒՉ ԽՈՐՀՐԳՈՑ ԵՒ ՀՈԳԱՐԱՐՉՈՒԹԵԱՆՑ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Ժողովս՝ Տեսուչ խորհրդոյ և Հոգաբարձութեանց անդամներն Սահմանադրական տարեգլխուն՝ այսինքն 1875 Մայիս 1 ին պայմանաւոր ժամին լրացածներուն և վիճակաւ փոխփոխելիքներուն տեղ նոր ընտրութիւն կատարելով , վերահրահրեց հետեւեալ խորհուրդներն ու Հոգաբարձութիւնները .

Ռուս մեական	Խորհուրդ
Վանօրից	"
Տնտեսական	"
Ելևմտից	Հոգաբարձութիւն
Հիւանդանոցի	"

Իսկ Գաւառատանական խորհրդոյ և կրտսկաց Հոգաբարձութեան վերակազմութիւնը Խառն Ժողովոյ վերապահեց :

Պ .

ՏԵՂԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Պ .

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՔ

Ժողովոյս վերջին միամեայ շրջանին մէջ թաղ . խորհրդոյ հրաժարու՛մ և նոր ընտրութիւնք պատահեցան որք են՝

Կառգիւղ . Առ ժամանակեայ թաղ . խորհրդոյ հրաժարմա՛ն , սահմանողրասէս նոր թաղ . խորհուրդ ընտրեցաւ և վաւերացաւ :

Պէշիքուղ . Թաղականաց պակասը լրացնելու համար ընտրութեան հրահանգ զրկուեցաւ :

Սաւաթիւղ Եկեհ մահալէ . Թաղ . խորհրդին հրաժարմամբ նորն ընտրելու հրահանգ զրկուեցաւ :

Կեօիք փաշա . Թաղ . խորհրդին հրաժարմամբ նորն ընտրելու հրահանգ զրկուեցաւ :

Եկեհ գիւղ և Ստէկիա . Թաղ . խորհրդոյ հրաժարմամբ նորերն ընտրելու հրահանգ զրկուեցաւ :

Ալեմաղի . Իսկիւտարի Ալեմալիի թաղ . խորհրդոյ առաջարկութեամբ Ալեմաղիի համար առանձին թաղ . խորհուրդ ընտրուեցաւ հրահանգ զրկուեցաւ :

Գու՛մ գափալի դաշու . Թաղ . խորհրդոյ լուծմամբ նոր թաղ . խորհուրդ ընտրուեցաւ և վաւերացաւ :

Քաւրու յէմէ . Թաղ . խորհրդին հրաժարմամբ նորն ընտրուեցաւ , և նորընտիր թաղ . խորհուրդն ալ թիչ ժամանակէ ետեւ անձնական գրազմանց պատճառաւ հրաժարելով՝ առ ժամանակեայ խորհուրդ մը գրուեցաւ մինչև ի նոր անօրէնութիւն :

Պէշքո՛ղ . Թաղ . խորհուրդն անհամաձայնութեամբ գրուած ըլլալով և գանձապետի հաշուոյ քննութիւնք տեղի ունենայնուն համար , առ ժամանակեայ խորհուրդ մը գրուեցաւ մինչև ի նոր անօրէնութիւն :

Խակիւտար Ս . Կարապետ . Թաղ . խորհրդոյ պայմանաժամն աւարակելուն պատճառաւ նոր թաղ . խորհրդոյ ընտրութեան հրահանգ զրկուեցաւ :

Խապիւղ . Թաղ . խորհրդոյ պայմանաժամն աւարակելուն պատճառաւ նոր թաղ . խորհրդոյ ընտրութեան հրահանգ զրկուեցաւ :

Պէշիքուղ . Թաղ . խորհրդոյ պայմանաժամին աւարակելուն պատճառաւ նոր թաղ . խորհրդոյ ընտրութեան հրահանգ զրկուեցաւ :

Ձ .

ԲԵՐԱՅԻ ԱԼԿԱԶԱՐԻ ԽՆԴԻՐԸ

Ալիազարը թէև Աղզին յանձնուած , սակայն նախորդ փորձակային ունեցած մեծագումար պարտոց վճարման համար անոր կարասիքը Պատրիարքարանի պահանջման համեմատ զըրուական տակ առնուած ըլլալով , նոյն կարասեաց վաճառման խնդիրն աւելցած կիկնար :

Ժողովս այս խնդրոյն գառական կարգադրութեամբ համար կարգուած փաստաբանին հետ բանակցելով , պէտք եղած անգլիկութիւնն ըստանալի ետեւ , նոր թաղրիւր մը դրեց , զոր անձամբ ներկայացուց Սրբազան Պատրիարքն Առտալին գործոց Բարձր . Կախարարին և բանիւ բերանոց ևս խօսեցաւ անոր հետ : Ասոր վրայ բարձրագոյն հրամանաւ գործը յատուկ գատարանի մը յանձնուեցաւ , և յետոյ բերայի կառուածական Հոգարարձութեան ու անոր կողմէ կարգեալ փաստաբանին մէջ անհամաձայնութիւն պատահելով և յիշեալ փաստաբանը ժողովիս գիտելով հրաժարել ուղեղն համար , ժողովս միջամտեց և անհամաձայնութիւնը լուծելով պարտաւորեց դիտատարանն իւր պաշտօնը շարունակել և գործն ի յանդ հանել :

Բարձրագոյն գանձէն եկած ծանուցադիր մը յայտնելով թէ Գաղղիոյ դեռաբանատունը Փարիզի փոսկեալ վարժարանին պարտոց համար բերայի եկեղեցւոյն սեպտեմբերի Ալիազար կալուածին եկամուտն ու Ֆէրայը սկստիցս բրած է , Ժողովս այս մասին բերայի կալուածական Հոգարարձութեան հետ խորհրդակցելէ ետեւ , ան-

ընդունելի գտանց նոյն սկստիցս , և յատուկ թաղրիւրով մը բողոքեց և բարձու՛մը խնդրեց : Միանգամայն որիչ թաղրիւրով մը նոյն սկստիցս պատճառ համարուած փարիզի վարժարանին պարտքն ազգին անընդունելի ըլլալն ալ ծանոցց Բ . զրան :

Յ .

ԲԵՐԱՅԻ ԿԱԼՈՒԱՄԱԿԱՆ ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ա . Հանդուցեալ Տատեան Պողոս Ալին վրայ գտնուած բերայի ազգոյն կալուածներն եկեղեցւոյ վրայ դարձնելու առաջարկութիւնը նկատողութեան առնալով Ժողովս նոյն Հոգարարձութեան յանձնարարեց հանդուցեցոյն ժառանգորդոց բազրիքներն ստնելու համար պէտք եղած միջոցներն ի գործ դնել :

Բ . Բերայի կալուածոց սնտուկին Անդղիոյ դեռաբանատան նախորդ առաջին թարգման Միսիս Բիզանիի պարտքն եղած գումարին և ստեղծուած հաշիւը տեսնելով կարուածական Հոգարարձութիւնը նոր պարտադիր մը ստորագրած և իւր անգլիկադրովը զրկած էր Սրբազան Պատրիարք Հօր վաւերացման համար : Ժողովս նոյն անգլիկադրին համաձայն յիշեալ պարտագրին մէջ Հոգարարձութեան անգամայն ստորագրութիւններն ու Հոգարարձութեան պաշտօնական կիկրը վաւերացնել որոշեց :

Զ .

ԲԵՐԱՅԻ ՎԱՐՃԱՐԱՆԱՑ ՀԱՄԱՐ ԹԱՂԱՏԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՑ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Բերայի թաղ . խորհուրդը թաղին վարժարանաց բարեկարգութեան և անոր անմիջական յարակցութիւն ունեցող ինչ ինչ խնդիրներն ի գաւիս հանելու պաշտօնով թաղին պատուարներէն 7 անձինք թաղացին յանձնաժողով մը ընտրած ըլլալը յայտնելով հաստատութիւնը կր խնդրէր : Ժողովս Ուսումն . խորհրդոյ կարծիքն ստանալէ ետեւ նկատողութեան առնալով նաև այն բացառիկ վիճակն , որս մէջ ինկած է բերայի

թաղն իւր համաձայնակ հրկիզութեանն ի վեր և որ պարտաւորած է զՎարչութիւնն բերայի և կեղեցւոյ պարտոց կարգադրութեան խնդիրն և կալուածոց անգլիկադր թաղ . խորհրդէն դատելով անկէ անկախ յատուկ Հոգարարձութեան մը յանձնելու , ձգելով թաղ . խորհրդոյ միայն կեղեցւոյ ներքին հաղթներով թէ կեղեցիկ և թէ թաղին դպրոցները մատակարարել , ընդունեց և հաստատեց թաղ . խորհրդէն առաջարկեալ յանձնաժողովն Պժմանդակ յանձնաժողով անունով : Ժողովս Բերայի թաղ . խորհրդոյ և իւր օժանդակ յանձնաժողովոյն առաջարկութեան վրայ նաև Ս . Յարութիւն Եկեղեցւոյ յարակից կալուածները պարգեւու հաճութիւն և որոշում տուաւ . որդիս զի նոյն կալուածները նորոգուելով թաղին դպրոցաց եկամուտ բերելու ծառայեն , այն պայմանաւ որ թաղ . խորհուրդը յիշեալ կալուածոց մէջ պատասխարեալներէն չբաւար և ազրտու եղաղներուն բնակարանի համար մէկ մէկ վարձք վճարէ :

Յ .

ՂԱԼԱԹԻՈՑ ԿԱԼՈՒԱՄԱԿԱՆ ԵՆՈՒԹԵԱՆՑ ԽՆԴԻՐԸ

Ղարթիւղի հրկիզեալ ազգոյն կալուածաց վնասութեան խնդրոյն վրայօք Ղալաթիւղի կալուածական Հոգարարձութեան և Տնօ . խորհրդոյ անգլիկադրերն ստանալէ ետեւ Ժողովս իւր մէջէն յանձնաժողով մը կարգեց շինութեան յատկադիք տեսնելու , մանրամասն քննութիւնները կալուածական Հոգարարձութեան և ճարտարապետ Ալիազարեան Էֆէնտիին հետ ընելու , և ստանց անեմուն որդիւնը ժողովիս բերուելէ ետեւ , շինութեան ձեռնարկութեան որոշում տալու համար : Այն նախապատրաստութիւնք կատարուելէ ետեւ . ժողովս ներկայացեալ յատկազօին համեմատ և Ալիազարեան Էֆ . ի ճարտարապետական պատասխանատուութեան տակ , բոլոր ծախքը 2200 ոսկին չանցնելու պայմանաւ շինութեան ձեռնարկութեանն որոշում տուաւ : Ապրիլ թիկնէն և Տնօ . խորհրդէն ալ մէկմէկ տեսուչ կարգելով , որպէս զի Ղարթ-

Թիւյ կալուածական Հոգարարձութեան հետ միանալով հսկեն նոյն շինութեան գործոց , և այսպէս ձեռնարկեալ շինութիւնք լրացան և հաշուեցոյցն ի վերջոյ ներկայացաւ Տնտ . խորհրդոյ , որ գոհացոյցիչ գտած էր զայն :

Սոյն ձեռնարկութիւնք յաջողութեամբ 'ի գրախ հանելէ ետև , Ղալաթիոյ կալուածոց Հոգարարձութիւնն այս անգամ նոր շինութեանց ուրուագիծ մ'աւ ներկայացուց , որու համեմատ կառավարիութիւն սոյն նոր շինքը հիմնել զալաթիոյ Սարքըղար փողոցին մէջ եկեղեցւոյն յարակից 950 կանգուն տարածութեամբ գեանին վրայ , ետայտի և քարաշէն , որան գեանայտիքը 7 ը մեծ ու փոքր միջերանոց պարունակէ , 210 ոսկի տարեկան եկամտաբերող . և երկրորդ յարկն ունենոյ Ղարչութեան ժողովոց համար 3 ընդարձակ և 3 փոքր սենեակներ , նոյնպէս քարողչի քահանայից և թաղ . խորհրդոց համար սենեակներ և վարժարանի շէնքին կցուելու քունի մը դասարաններ : Իսկ երրորդ և վերին յարկն իւր ամբողջ տարածութեամբը Սղղային Ժողովին համար խորհրդարան յատկանոց : Սոյն ուրուագիծին համեմատ շինութիւնք կառարուելու համար առ առաւելն 3 հազար լիրայի ծախսոց պէտք նշանակուած է , մէն մի կանգունին համար 3 լիրա հարուելով , և 2000 լիրայի փախաութեամբ 0/10 ին 12 տակոտով , պակասձր' շինութեան ասեն կալուածներէն հետզհետէ գոյացած արդիւնքով զխնամորելու սրբմանու : Տնտես . խորհուրդն այս շինութեան ուրուագիծը և յարակից սրբմանները բնեկով տեսեր է որ թէ նախորդ և թէ առաջարկուած նոր շինութեան պատճառաւ Ղալաթիոց կալուածոց սնտուկին պարտքը 3000 օսմ . ոսկւոց պիտի յանգի և վճարելի տարեկան տակոս պիտի ունենայ 450 ոսկի , 360 լիրա նախորդ և վերջին շինութեանց փոխառութիւններուն և 90 լիրա նախկին 1000 ոսկւոց պարտոց համար . իսկ փոխարէն կալուածոց սնտուկն ընդունելով 210 լիրա կատուցանելի 7 միջերանոցն , 840 լիրա և սարգէն կատուցեալ մեծ կալուածէն , ընդ ամենն 1050 լիրա , պիտի կարենայ հատուցանել այս

գուանրէն 450 լիրայի տակուեայ գուանր , և տակցած 600 լիրան տարուէ տարի մայր պարտոց գլխավճարին թերհաչիւ հատուցանելով' հինգ վեց տարիէն սոյն պարտքն ամբողջապէս մարբել ու բաւնալ : Վարով փարժարանին ծախսոց' կալուածական նորագութեանց և սրոց , այս պիտոյից պիտի յատկանան միւս կալուածոց տարեկան 400 ոսկւոց հատոյթն և ընդ նմին եկեղեցւոյն փողօսոց տարեկան 300 ոսկւոց արգիւնքն , ընդ ամենն 700 լիրա Օսմանեան :

Ժողովս Տնտ . խորհրդոց հետ համամարէն' կալուածոց Հոգարարձութեան այս նոր շինութեանց առաջարկն ու յատակագիծը' յարակից կարգադրութեանց հետ օգտակար և ընդունելի գտնելով , ձեռնարկելու համար իւր հասանութիւնք տաւ , զարձեալ ըստ առաջնոցն Ղարչութեանն և Տնտ . խորհրդէն տեսուչներ կորդելով , և որոշեց նաև կալուածական Հոգարարձութեան առաջարկութեան համաձայն' որ Ղալաթիոյ ի թօփնուլար ճատտէ , ի Պայպիտի Սարքըղար փողոց նորագ կառուցեալ ընդարձակ կալուածոց հատոյթն ամբողջապէս տաանց որ և է բացասիկ պիտոյից ծառայելու յատկանոց անխախտ կալուածոց շինութեան պարտոց տակախին և գլխավճարին :

ՍԱՄԱԹԻՈՅ ԷՐԿԻՋԵԱՆ Ս . ԳԵՈՐԳ ԵԿԵՂԵՑ ԻՈՅ ԾԵՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

